



**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց**

27 սեպտեմբերի Իրաֆի գյուղատնտեսության նախարարին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրաքի Հանրապետության գյուղատնտեսության նախարար, հայ-իրաքյան միջկառավարական հանձնաժողովի համանախագահ

վեց նաեւ Իրաքում քրիստոնեական համայնքների, այդ թվում նաեւ՝ հայ համայնքի դիմագրաված դժվարությունների մասին: Այս առնչությամբ նախարար Ալ-Լահիբին վստահեցրեց, որ իշխանություններն անհրաժեշտը պիտի ա-



Ֆալահ Հասան Չեյդան Ալ-Լահիբիի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Իրաքի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Կարեն Գրիգորյանին:

Հանդիպմանը Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց, որ նման այցերի շնորհիվ Հայաստանի եւ Իրաքի միջեւ հարաբերություններն ու գործակցությունը սերտանում եւ առավել ամրապնդվում են: Հայոց Հայրապետը տեղեկացրեց նախարարին, որ օրեր առաջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալել է նաեւ Իրաքի քրիստոնեական Եկեղեցիների առաջնորդներին:

Իր հերթին տիար Ֆալահ Հասան Չեյդան Ալ-Լահիբին շեշտեց, որ հայ ժողովուրդը բարեկամ ժողովուրդ է, եւ Հայաստան իր այցի նպատակն այդ բարեկամության առավել ամրապնդումն է:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Իրաքի գյուղատնտեսության նախարարն անդրադարձ կատարեցին Իրաքում տիրող իրավիճակին եւ առկա մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ իշխանությունների կողմից ձեռնարկվող ջայլերին: Խոս-

նեն՝ զորակցելու բոլոր համայնքներին՝ վերականգնելու իրենց խաղաղ ու ապահով կյանքը: Խոսելով հայ համայնքի մասին՝ վերջինս տեղեկացրեց, որ հարյուր տարի առաջ Իրաքն իր դռները բացեց Հայոց ցեղասպանությունից մազապուրծ հայորդիների առջեւ, եւ այսօր համայնքն Իրաքի անբաժանելի մասն է կազմում եւ լիարժեքորեն մասնակցում է երկրի կառուցմանը:

Գարեգին Բ Կաթողիկոսը, իր գնահատանքը հայտնելով հայ համայնքի նկատմամբ դրսևորվող ջերմ վերաբերմունքի համար, մաղթեց, որ Իրաքը շուտափույթ հաղթահարի այս փորձությունները, եւ Իրաքի բարեսեր ժողովուրդը վերստին ապրի խաղաղ եւ ստեղծագործ կյանքով:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայցեց Բարձրյալին՝ հաստատուն եւ անխախտ պահել հայ-իրաքյան դարավոր բարեկամությունը եւ արդյունավորել նախարար Ֆալահ Հասան Չեյդան Ալ-Լահիբիի գործունեությունն ու առաքելությունը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

3 հոկտեմբերի Բուլղարիայից մի խումբ ուխտավորների



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բուլղարիայից մի խումբ ուխտավորների՝ ուղեկցությամբ Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Իսահակ վրդ. Պողոսյանի եւ ԲԲԸՄ-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Վազգեն Յակուբյանի: Խումբը, որի կազմում էին Բուլղարիայի ազգային գործիչներ, արվեստի ներկայացուցիչներ եւ խորհրդարանի պատգամավորներ, Հայաստան է ժամանել մասնակցելու նաեւ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանու ներքո, Սոֆիայի ու Հայաստանի ազգային պատկերասրահների ջանքերով կազմակերպված հանրահայտ բուլղարահայ գեղանկարիչ Պետիկ Պետրոսյանի նկարների ցուցահանդեսին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը վերհիշեց Բուլղարիա կատարած իր հովվապետական այցը՝ ընդգծելով, որ ականատեսն է դարձել բուլղարահայ համայնքի հավատավոր ընթացքին, Հայ Եկեղեցու շուրջը համախառնվելու եւ ազգային արժեքներով ապրելու նրա ձգտումին: Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց նաեւ, որ Բուլղարիայի հայկական համայնքն ունի հարուստ պատմություն եւ մշտապես իր կարողություններով մասնակից է դար-

ձել երկրի զարգացմանն ու առաջընթացին: Նորին Սրբությունն արձանագրեց, որ Սփյուռքի հայկական համայնքները կարելուր կամուրջ են հանդիսանում իրենց հյուրընկալած երկրների եւ հայրենիքի միջեւ սերտ, բարեկամական հարաբերությունների հաստատման գործում:

Անդրադառնալով լուսահոգի Պետիկ Պետրոսյանի նկարների ցուցահանդեսին՝ Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց բոլոր կազմակերպիչներին՝ շեշտելով, որ նման մշակութային միջոցառումների անցկացումը միմիայն նպաստում է երկու ժողովուրդների փոխճանաչմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահություն հայտնեց, որ նմանօրինակ այցելությունները եւս խթան կդառնան թեմական կյանքի աշխուժացման, ինչպես նաեւ հայ-բուլղարական կապերի առավել սերտացման ու ամրապնդման համար: Հանդիպմանը ներկա էր նաեւ Հայաստանի Հանրապետությունում Բուլղարիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան տիկին Մարիա Ցոցորկովա-Կայմակչեւան:

5 հոկտեմբերի ԿՄ-ում Իրանի դեսպանաւսան մշակույթի կենտրոնի նորանշանակ ղեկավարին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան պատվիրակությանը՝ գլխավորությամբ Իրանի Իսլամական կապերի եւ մշակույթի կազմակերպության միջազգային գծով տեղակալ պրն Աբբաս Խամեյարի:

Պրն Աբբաս Խամեյարը Նորին Սրբությանը ներկայացրեց դեսպանատան մշակույթի նորանշանակ տնօրեն Խեյեդ Մուհամմադ Ռեզա Յեյդարին: Հանդիպմանը Վեհափառ Հայրապետին հրաժեշտ տվեց իր առաքելությունն ավարտող տնօրեն Մաջիդ Մեշքին՝ շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուշադրության, իր պաշտոնավարման ընթացքում Մայր Աթոռի հետ ունեցած արդյունավետ համագործակցության ու ջերմ կապերի համար:

Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ երկու երկրների միջեւ տարբեր ոլորտներում արձանագրված սերտ համագործակցությանը: Գարեգին Բ Հայրապետը մասնավորապես խոսեց մշակույթի կենտրոնի հետ Մայր Աթոռի սերտ կապերի եւ համատեղ իրականացրած միջոցառումների մասին՝ այդ կապակցությամբ իր գնահատանքը փոխանցելով պրն Մեշքին եւ հույս հայտնելով, որ գործակցությունը մշակույթի կենտրոնի հետ կշարունակվի:

Զրույցի ընթացքում կարելուրվեց մշակույթների եւ կրոնների միջեւ երկխոսության խթանումը:

նում, ինչը նպաստում է ժողովուրդների փոխճանաչմանը եւ համերաշխության, հանդուրժողականության ու խաղաղ համակեցության մթնոլորտի ձեւավորմանը: Զրուցակիցները հաստատեցին, որ կրոնները խաղաղասիրական առաքելություն ունեն՝ դատապարտելի նկատելով ծայրահեղական ուժերի կողմից կրոնի շահարկումները եւ կրոնական քողի ներքո աշխարհում տեղ գտնող բռնություններն ու ահաբեկչությունները:

Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետն ընդգծեց Մայր Աթոռի պատրաստակամությունը՝ շարունակելու սատարել կրոնական երկխոսությանը եւ ակտիվ մասնակցություն բերել այդ գործընթացում:

Պրն Աբբաս Խամեյարը իբրեւ կրոնական համայնքների համերաշխ կեցության օրինակ նկատեց հայկական համայնքների առկայությունն Իրանում: Այս առիթով Նորին Սրբությունն իր երախտագիտությունը հայտնեց ԻԻՀ իշխանություններին՝ հայկական համայնքների եւ հոգեւոր-մշակութային արժեքների հանդեպ դրսևորվող հոգատար վերաբերմունքի համար:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մշակույթի կենտրոնի նորանշանակ տնօրենին մաղթեց արգասաբեր գործունեություն Հայաստանում:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

7 հոկտեմբերի

Շախմատիս Լեւոն Արոնյանին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց միջազգային գրոսմայստեր, շախմատի կրկնակի զավթակիր Լեւոն Արոնյանին եւ նրա տիկնոջը՝ Արիանա Կառիլինին։

Ամենայն Հայոց Հայրապետը, շնորհավորելով տաղանդավոր շախմատիստին, ընդգծեց, որ նրա հերթական հաղթանակը մեծ ուրախություն պարգևեց ամենքին՝ փառք եւ պատիվ հավելելով հայոց ազգին եւ հայրենի երկրին։ Նորին Սրբությունը նշեց, որ նման ձեռքբերումները ոգեշնչող են շախմատով հետաքրքրվող մանուկների համար, ովքեր ձգտում են նմանվել Արոնյանին։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր շնոր-

հավորանքներն ուղղեց նորապսակ զույգին՝ մաղթելով, որ Աստված ուղեկից լինի նրանց եւ պարգևի մշտական հաղթանակներ անձնական կյանքում եւ շախմատի ոլորտում։

Իր հերթին Լեւոն Արոնյանը, շնորհակալություն հայտնելով հայրապետական գնահատանքի համար, Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեց առաջիկա մրցույթների մասին։ Խոսելով արձանագրած հաջողությունների մասին՝ գրոսմայստերը շեշտեց, որ ժողովրդից ստացած սերն ու հարգանքը պետք է ջանա այսուհետ եւս վերադարձնել հաղթանակների տեսքով։

8 հոկտեմբերի

«Ջինիշյան» հիմնադրամի ներկայացուցիչներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի ամերիկյան խորհրդատվական կոմիտեի անդամներին, հիմնադրամի վարչության նախկին անդամներին, նվիրատուներին եւ հյուրերին՝ գլխավորությամբ հոգաբարձուների խորհրդի անդամ տեր եւ տիկին՝ Մայքլ եւ Մարի Հարաթունյանի, Ամերիկայի Երիցական եկեղեցու համաշխարհային առաքելության տնօրեն վերապատվելի Խոսե

Լուիս Զասալի եւ «Ջինիշյան» հիմնադրամի ամերիկյան գրասենյակի տնօրեն տիկին Էլիզա Մինասյանի։ Խումբն ուխտավորաբար Հայաստան էր ժամանել «Ջինիշյան» հիմնադրամի 50-ամյակի առիթով։

Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ «Ջինիշյան» հիմնադրամը, հաստատվելով Հայաստանում անկախությունից հետո, բազմաթիվ բարեգործական ծրագրեր է իրականաց-

րել՝ մեծ աջակցություն բերելով երկրին եւ ազգին՝ հատկապես դժվարին տարիներին։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնահատանքով արձանագրեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ հիմնադրամի միջեւ առկա է սերտ համագործակցություն, որի շրջանակներում «Ջինիշյան» հիմնադրամն իր կարելուքները ունի բերում Մայր Աթոռի մի շարք ծրագրերին, այդ թվում նաեւ՝ թեմերում ու հոգեւոր կառույցներում իրականացվող կրթական, սոցիալական ու համայնքային զարգացման ուղղված բարեգործական ծրագրերին։

Հանդիպմանը Գարեգին Բ Կաթողիկոսը պատասխանեց հյուրերի հարցերին, որոնք վերաբերում էին Մայր Աթոռի միջեկեղեցական հա-

րաբերություններին ու Հայ եկեղեցու ընդարձակ գործունեությանը։

Վերջում Վեհափառ Հայրապետը հյուրերին մաղթեց Աստծո օրնությունն ու Սուրբ Հոգու առաջնորդությունը՝ իրենց հանրօգուտ գործունեության մեջ։

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի ներկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն, հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի խորհրդատվական կոմիտեի ատենապետ Պարույր քին։ Ավետիսյանը։

Հյուրերն այցելեցին նաեւ Մայր Աթոռի թանգարանները եւ մասնակցեցին նաեւ Պատարագի արարողությանը։

10 հոկտեմբերի

Սփյուռքահայ հայագիր եւ օտարագիր գրողների համաժողովի մասնակիցներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Գարեգին Ա» կրթական կենտրոնում ընդունեց Սփյուռքահայ հայագիր եւ օտարագիր գրողների համաժողովի մասնակիցներին՝ գլխավորությամբ Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանին։

Հայաստանի գրողների միության նախագահը Նորին Սրբությանը ներկայացրեց համաժողովի մասնակիցներին եւ համաժողովին քննարկվող խնդիրների շրջագիծը։ Պրն Միլիտոնյանն անդրադարձավ նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ գրողների միության միջեւ առկա համագործակցությանը, որի շրջանակներում օրեր անց՝ համաժողովի ավարտին, Օշականի դպրատանը կանցկացվի ամենամյա «Կանթեղ» մրցակաբաշխությունը։

Այնուհետեւ ներկաներին իր գնահատանքն արտահայտեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ ուրախություն հայտնելով հայրենիքում պարբերաբար գումարվող հայ գրողների համաժողովի առիթով։ Նորին Սրբությունն օգտակար նկատեց նման ձեռնարկները, որոնք առավել արդյունավոր են դարձնում հայ գրողի առաքելությունն ազգային կյանքում։ Գարեգին Բ Հայրապետը կարեւորեց նաեւ սփյուռքահայ գրականության տարածման խթանումը Հայաստանում, որպեսզի հայրենի հասարակությունը եւս հաղորդ դառնա հայագիր եւ օտարագիր գրողների ստեղծած արժեքավոր գրական ժառանգությանը։

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը մտահոգություն արտահայտեց ազգային կյան-

քում նկատվող ազգային-բարոյական արժեքների նահանջի առիթով եւ այդ իրավիճակի շտկման գործում կարեւորեց հայ գրողների, մտավորականների առաքելությունը։ Նորին Սրբությունը շեշտեց, որ հայ գրողների ստեղծագործությունները պետք է նպաստեն երիտասարդության մեջ հայրենասիրարական ոգու, ազգային գիտակցության ու նկարագրի ձեւավորմանը։ Այս գործում Հայոց Հովվապետը շահեկան համարեց գործակցությունը Հայոց եկեղեցու եւ հոգեւոր դասի հետ։

Նորին Սրբությունը, իր հայրապետական օրհնությունը փոխանցելով համաժողովի մասնակիցներին, պատրաստակամություն հայտնեց զորակցելու հայագիր եւ օտարագիր հայ գրողներին, ինչպես նաեւ Մայր Աթոռի հնարավորությունները ծառայեցնելու ազգօգուտ նման ձեռնարկների կազմակերպման համար։

Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ հայ գրողները շարունակեն իրենց ստեղծագործական կյանքով ծառայություն բերել հայ ժողովրդին։

Նորին Սրբությունը պատասխանեց նաեւ գրողների հարցերին, որոնք վերաբերում էին Սփյուռքում հայոց լեզվի ուսուցման ու պահպանման խնդիրներին, հոգեւորականների պատրաստությանը, հայրենիքում առկա դժվարություններին։

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Գեորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը։

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագիրը ԱՄՆ նախագահին

Հոկտեմբերի 2-ին Ն. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական նամակ է հղել Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփին՝ Լաս Վեգասում տեղի ունեցած ողբերգական դեպքերի կապակցությամբ։

Վեհափառ Հայրապետն իր վշտակցությունն է հայտնել ԱՄՆ նախագահին, Ամերիկայի ժողովրդին եւ զոհվածների ընտանիքներին՝ աղոթելով վերջիններս հոգիների հանգստության համար։ «Աղորում ենք, որ Տերը խաղաղություն եւ մխիթարություն շնորհի բոլոր սպացողներին, ինչպես նաեւ տուժածներին պարգևի արագ ապաքինում, քաջառողջություն եւ ուժ՝ հաղթահարելու այս ողբերգական միջադեպը», - նշված է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագրում։

Նորին Սրբությունը մաղթել է, որ Աստված ապահով պահի Միացյալ Նահանգները եւ Ամերիկայի ողջ ժողովրդին։

Արգենտինայի ՀԲԸՄ-ի տիկնանց միության անդամների այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Հոկտեմբերի 1-ին Արգենտինայի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության տիկնանց միության անդամները՝ գլխավորությամբ միության ատենապետուհի Մարթա Եմիլյանի, այցելեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածին։

Միության անդամները հանդիպում ունեցան Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանի հետ։

Սրբազան հայրը, հյուրերին փոխանցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույններն ու օրհնությունը, անդրադարձավ Տիկնանց միության կարելուքներին կյանքում, մասնավորապես՝ օգտաշատ գործունեությանը՝ ի նպաստ ապագա սերունդների հայեցի դաստիարակության, հայկական ինքնության եւ հայոց լեզվի պահպանման։

Այնուհետեւ Նաթան սրբազանը խոսեց Սփյուռքի համայնքների առջեւ ծառացած խնդիրների, մարտահրավերների եւ դրանց հաղթահարման ուղիների մասին։ Այս առնչությամբ մեծապես կարեւորվեց Հայոց եկեղեցու առաքելությունը Սփյուռքում։

Վերջում Նաթան սրբազանը, իր գնահատանքը հայտնելով Տիկնանց միության անդամներին, մաղթեց ամենակալ Աստծո պահպանությունն ու առաջնորդությունը եւ արգասաբեր գործունեություն Արգենտինայի հայկական համայնքներում։

Ավարտին միության անդամները մասնակցեցին սուրբ Պատարագի արարողությանը, այցելե-



ցին Մայր Աթոռի թանգարաններ։

Նույն օրը Նաթան արք. Հովհաննիսյանն ընդունեց նաեւ Վիեննայի Պեդագոգիկոլոգի կաթո-

լիկ համայնքի ուխտավորներին՝ գլխավորությամբ համայնքի հոգեւոր հովիվ հայր Յոզեֆ Գրյունվիդելի։

Նոր նշանակում

Ն. Ս. Ս. Ս. Ս. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Գաբրիել վրդ. Սարգսյանը, ազատվելով Եգիպտոսի հայոց թեմում ստանձնած իր պարտականություններից, ծառայության է կոչվել Իրաքի հայոց թեմում՝ թեմակալ առաջնորդի իշխանության ներքո։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց Երեւանում ռուսական եկեղեցու օծման արարողությանը



Հոկտեմբերի 7-ին Ն. Ս. Ս. Օ. Ս. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մայրաքաղաք Երեւանում ներկա գտնվեց ռուսական Սուրբ Խաչի վերացման եկեղեցու օծման արա-

մենայն Հայոց Կաթողիկոսը մուտք գործեց եկեղեցի: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննի-

սեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ արարողությանը Նրա օրհնաբեր ներկայության համար, որից հետո հրավիրեց Նորին Սրբությանն իր պատգամը փոխանցելու ժողովրդին:

Ամենայն Հայոց Հայրապետն իր գոհունակությունն արտահայտեց ռուս ժողովրդի հայաստանաբնակ զավակների հոգեւոր կյանքում այս նշանակալի իրադարձության առիթով: «*Դեպի երկինք իր գմբեթները պարզած այս տաճարն արտահայտությունն է Հայաստան աշխարհում հոգեւոր կյանքի վերագարթոնքի, դրսևորումը հոգեւոր-բարոյական արժեքների հանդեպ հավատարմության եւ վկան հոգեւոր կարիքների նկատմամբ հայրենի իշխանությունների ուշադրության:*

Յուրաքանչյուր Նորակառույց սրբազան տաճար՝ իբրեւ տուն աղոթքի, իր շուրջը համախմբելով հավատացելոց եւ կազմակերպելով Նրանց ծխական կյանքը, դառնում է Նախ եւ առաջ ջինջ ակունք աստվածային շնորհի եւ ողորմության, դեպի հավիտենական կյանք եւ Աստծո արքայություն առաջնորդող մի տերունապարգե ճանապարհ: Եվ որքան առատալուծ են սրբազան տաճարները մեր կյանքում, այնքան բազմաճյուղ է Աստծո ներկայությունը մեզանում՝ երկնառաք օրհնությամբ, հավատի բարի գործերով եւ սիրո, համերաշխության ու հանդուրժողականության մշտաժողով պատգամով:

Սիրելիներ, այս եկեղեցին վկայությունն է հայ եւ ռուս ժողովուրդների բազմադարյա եղբայրության, դավանած ընդհանրական արժեքների, պատմության մեջ համատեղ արձանագրած փառավոր ու դժվարին Էջերի եւ այսօրվա գործակցության: Այն քարակերտ արտահայտությունն է Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ թուր եկեղեցիների սերտ բարեկամության, որի պտուղն են Նաեւ խաղաղության պայմաններում հայոց հողում եւ Ռուսաստանի տարբեր քաղաքներում բարձրացած այլ եկեղեցիներ եւ մատուռներ», - ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր շնորհավորանքները հղեց Նորին Սրբություն Ս. Ս. Ս. Օ. Ս. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարքի փառնակալ աղոթքով:

րիարքին, Նաեւ շնորհավորեց Լեոնիդ Եպիսկոպոսին՝ գնահատելով Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ եկեղեցիների հարաբերությունների առավել ամրապնդմանն ուղղված Նրա ջանքերն ու ծրագրերը:

րերար Արա Աբրահամյանին: Վերջում վերստին շնորհավորելով քույր եկեղեցու բարեպաշտ զավակներին՝ Նորին Սրբությունն աղոթք բարձացրեց առ Աստված՝ հայցելով ամենողորմ Աստծո հովանին հավատակից մեր երկու բարե-



Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը փոխանցեց Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Վոլինսկին՝ երկու երկրների ու եկեղեցիների հարաբերությունների սերտացման, ինչպես նաեւ եկեղեցու կառուցման գործում բերած ներդրումի համար: Հայրապետական օրհնություն փոխանցվեց նաեւ եկեղեցու ռուսաստանաբնակ բա-

կամ ժողովուրդներին, Հայաստանի Հանրապետությանը եւ Ռուսաստանի Դաշնությանը: Հայոց Հովվապետը մաղթեց, որ Տիրոջ առաջատու շնորհներով ու օրհնությամբ միշտ պտղաբերի Ռուս Ուղղափառ եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցիների գործակցությունը:

Օծման առիթով Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նորակառույց տաճարին նվիրեց Տիրոջ խաչելության պատկեր:



րողությանը: Եկեղեցու հիմնարկեքը կատարվել էր 2010 թվականի մարտի 18-ին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կրիլ Պատրիարքի միասնական աղոթքով:

Նորակառույց եկեղեցու առջեւ Նորին Սրբությանը դիմավորեցին Հայաստանում Ռուս Ուղղափառ եկեղեցու համայնքների կառավարիչ, Վարդիկովկասի եւ Ալանիայի Լեոնիդ Եպիսկոպոսը եւ եկեղեցու բարերար Արա Աբրահամյանը: Աղ ու հացի արարողությունից հետո Ա-

յանը, միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե Մ. վրդ. Անանյանը, գավազանակիր Աղան արք. Երնաշկյանը եւ տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քն. Մելիքյանը:

Լեոնիդ Եպիսկոպոսը, Ռուս Ուղղափառ եկեղեցու հոգեւոր դասի հետ կատարելով օծումը, արարողության ավարտին իր խոսքն ուղղեց ներկաներին՝ շնորհավորելով տաճարի օծման առիթով: Սրբազանն իր շնորհակալությունը հայտ-

Հոկտեմբերի 10-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն. Ս. Ս. Օ. Ս. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք ֆ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, կատարվեց ՀՀ զինված ուժերի զորամիավորումներին ընծայվող խաչվառների օրհնության եւ հանձման արարողությունը:

Արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, ՀՀ ՉՈՒ զվխավոր շտաբի պետ գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում պաշտոնավարող Եպիսկոպոսներ, միաբաններ, ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Արտակ Չաքարյանը, զորամիավորումների հրամանատարներ, ՀՀ ՊՆ վարչության պետեր, ՀՀ ՉՈՒ հոգեւոր առաջնորդության գեղերեցներ եւ սպասավորներ, Երկրպագի կամավորական միության վարչության նախագահ Մանվել Գրիգորյանը եւ զինվորականներ:

Մայր տաճարի գանգերի դղանքների ներքո հանդիսավոր խաչվառազարդ թափորն Ամենայն Հայոց Հայրապետին առաջնորդեց դեպի Ս. Տրդատի բաց խորան, ուր կատարվեց քսանմեկ խաչվառների օրհնության արարողությունը:

Խաչվառների օրհնությունից հետո ներկա զինվորական դասին իր պատգամը փոխանցեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ամենքին բերելով հայրապետական իր ողջույնն ու օրհնությունը:

«...Հայրենիքի անվտանգության, խաղաղության եւ մեր ժողովրդի արդար իրավունքների պաշտպանության համար ձեր ծառայությունը համահունչ է քրիստոնեական մեր հավատքի կոչին ու հրավերին՝ պայքարելու

ՀՀ ԶՈՒ խաչվառների օրհնությանը կարգ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Աստծո կամքին հակառակ կործանարար ընթացքների, բռնության, մարդու եւ ժողովուրդների իրավունքների ռուսահարսման դեմ: Քրիստոնեությունը հաղթության ու գոության կրոն է, որը բացահայտում է առ Աստված հավատքի մեծագույն ուժը՝ առ Բարձրյալն ապավինությամբ ու Բարձրյալի գորակցությամբ աննկուն մաքաբելու բարու հաստատման համար: Այդ հիմնալի իրողությունը մենք տեսնում ենք մեր Փրկչի երկրային կյանքում: Տերը պայքար միջեց մեզի ու չարի դեմ, հաղթանակ տարավ ու հաղթության հավատը շնորհեց իր հետևորդներին՝ ասելով. «Զաջվերվեցե՛ք, որովհետեւ Ես հաղթեցի աշխարհին» (Հովհ. ԺԶ 33): Դարերի ընթացքում մեր ժողովուրդը հաճախ ստիպված է եղել լինել իր ինքնության ու անկախության պաշտպանության եւ իր գոյապայքարը վերածել է ազատամարտերի ու հերոսամարտերի, իր հավատքով գորացել ու անպարտելի դարձել՝ ընդդեմ կործանման ու ավերի: Հավատքով հզորացած մեր ժողովուրդը հայության բնաշնչման փորձերը պատմության հոլովույթներում վերածել է

վերհառնում, հարության ու հարատեւության: Աստծո գորակցությունը մենք զգացել ենք Ավարայրից մինչեւ Սարդարապատ ու Արցախ՝ գիտակցելով, որ զինվորն ենք Քրիստոսի, զինվորը արդարության, խաղաղության ու ամեն բարի գործի:

Քրիստոսի եկեղեցին այս աշխարհի վրա կոչվում է զինվորյալ եկեղեցի, որի հաղթության նշանն է խաչվառը: Խաչվառը դրոշ է, որով՝ որպես տեսանելի նշան, բարձր ենք պահում մեր հավատքը՝ մեզ առաջնորդող ու գորակույս ճանաչելով մեր Փրկչին ու Տիրոջը ու Նրա փրկարար խաչը: Խաչվառի հայտնությունը մեր Տերն Ինքը տվեց, երբ 4-րդ դարում հռոմեական արդարամիտ կայսր Կոստանդիանոսին, վճռական ճակատամարտից առաջ՝ օրը ցերեկով, երկնքում ցույց տվեց փայլատակող աստղազարդ խաչ եւ գրություն՝ «սրանով կհաղթես»: Խաչն իրենց դրոշներին պատկերած Կոստանդիանոսի գորքը հաղթանակ տարավ, եւ կայսրը հռչակեց քրիստոնեական հավատքի ազատ դավանությունը: Մարտերից առաջ մեր բանակը նույնպես օրհնել են հայոց հայրապետները եւ ուղեկցել բանակին խաչով ու խաչվառով: Խաչվառ դրոշը, որ տերունի եւ սրբերի պատկերներն է կրում, հիշեցնում է Աստծո ներկայության ու մշտական գորակցության մասին՝ փորձությունների ու հարվածների առջեւ անպարտելի մնացած քրիստոնյա զորավարների օրինակներով, սրբերի բարեխոսություններով: Շարունակությունը՝ էջ 4

Ջեյմս Ռասսելը հայ ժողովրդի կրակապաշտության մասին

Սկիզբը՝ թիվ 16-18

Այս համանուն գուգահեռ դրվագները, որոնք առաջին անգամ են կողք կողքի ցուցադրվում ներկա ուսումնասիրության մեջ, երեւան են հանում հեթանոս հայ քրմերի եւ կրակապաշտ պարսից մոգերի միանգամայն տարբեր եւ միմյանց հակադիր տոնական ծիսակարգերը: Այսու ակնդետ բացահայտվում է պատմական այն ճշմարտությունը, որ քրիստոնեությունից առաջ հայ ժողովուրդը՝ իր թագավորի գլխավորությամբ, ամենեւին կրակապաշտ չի եղել:

2. Անդրադառնալով Սասանյանների հարստության օրոք Ստահրում հիմնած Անահիտի տաճարին՝ Ռասսելը նշում է. «Սասանյանների ժամանակաշրջանում դինաստիայի գլխավոր տաճարը Ստահրում գտնվող Ադուր Անահիտը էր, որտեղ Արտաշիր I-ի նախնիները ծառայում էին որպես քահանաներ: ... սակայն Ստահիրի տաճարի կուռքի տեղում, ըստ Մասուդիի, հիմնվեց կրակարան՝ Արտաշիրի իշխանության գալուց սերունդներ առաջ» (James R. Russell. P. 246):

Այժմ ցույց կտամ, որ Մասուդիի հաղորդման մեջ որոշակի ժամանակավրեպ փաստեր կան, որոնք խաթարում են պրոֆ. Ռասսելի եզրահանգումը՝ Սասանյանների օրոք Անահիտ դիցուհու գլխավոր իրո տաճարի վերաբերյալ: Բանն այն է, որ Ադուր-Անահիտի իրո տաճար Ստահրում գոյություն չի ունեցել ի սկզբանե: Այնտեղ Անահիտի կուռքն էր միայն եւ ոչ թե կրակարան: Մասուդիին եւ նրան վկայակոչող Ռասսելը տեղյակ չեն, որ Սասանյան Արտաշիր I-ի որդի Շապուհ I-ը 440-50 թվերին Ռոմի դեմ տարած փառահեղ հաղթանակների պատվին իր եւ իր չորս զավակների հոգու եւ անվան հարատեւման համար կառուցեց հինգ իրո տաճար Պերսեպոլիս քաղաքի մոտակայքում՝ ընտանեկան ժառանգության կալվածքում, որոնց մասին հիշատակվում է 262 թվականին Զաքարիա-Չարոլուտ ժայռին փորագրված Շապուհ I-ի եռալեզու

արձանագրության մեջ (Ալբերտ Մուշեղյան. Մովսես Խորենացու դարը, էջ 275 ծանոթ. 2: Տե՛ս նաեւ Martin Sprengling. Third Century, Iran. Sapor and Kartir. Chicago, 1953, p. 11): Այդ տաճարների թվում էր նաեւ Շապուհ I-ի դուստր Աթուր-Անահիտի իրո տաճարը՝ «Խոսրով Աթուր-Անահիտ» անունով: Բայց դա Անահիտ դիցուհին չէ, այլ Շապուհ I-ի դուստրը, որը եւ նրա տիկնանց տիկինն էր, իսկ Մասուդիի հիշատակած Ստահիրի տաճարում էլ կանգնած էր միայն Անահիտ աստվածուհու կուռքը, որտեղ գոյություն չի ունեցել որեւէ կրակարան՝ համեմայն դեպս մինչեւ III դարի երկրորդ կեսը, երբ Կարտիր մոգպետն Իրանում համատարած հիմնեց կրակապաշտություն: Այստեղից պարզվում է, որ Մասուդիին եւ, նրան հետեւելով, պրոֆ. Ռասսելը, Պերսեպոլիս մոտ կառուցված Աթուր-Անահիտի իրո տաճարը շփոթել են Արտաշիր I-ի հայրենի գավառ Ստահրում եղած Անահիտի կուռքի տաճարի հետ:

3. Ռասսելը փորձում է հաստատել նաեւ, որ հայերը ոչ միայն կրակապաշտ էին, այլեւ մոխրապաշտ. «Հայերեն վկայություններ կան այն մասին, որ ժողովրդի հեթանոս նախնիները «մոխրապաշտ» են եղել» (James R. Russell. P. 166): Այս ասելով՝ նա նկատի ունի Ագաթանգեղոսի Պատմության Ա գրքում երեզ ավանում Գրիգոր Պարթեւի, այսպես կոչված, «Փոքր վարդապետությունը», երբ Տրդատի հրամանով դժնդակ չարչարանքների դատապարտված Գրիգոր Պարթեւը, դիմելով իր նոր Աստծուն, խնդրում է. «...Տեր, խառնեա՛ր զմեզ ի թիւ արդարոց քոց վասն մարդասիրութեան քոյ, որ ոչ թողեր զմեզ ընդ վայր ի մեղս հարցն մերոց եւ ի մոխրապաշտութեան նախնեաց մերոց եւ յանօրէնութիւնս առաջնոցն մերոց: Եւ ետուր ճանաչել զքնութիւն արարչութեանդ աստուածութեանդ քոյ, զի մի՛ կորիցուք յուսայնութեան հեթանոսութեան» (Ագաթ. պրգ. 89):



Սակայն պրոֆ. Ռասսելը ուշ չի դարձրել, որ նախնիների մոխրապաշտության մասին (James R. Russell. P. 491) Գրիգոր Պարթեւը այս խոսքերը արտասանում է այն ժամանակ, երբ քրիստոնեությունը դեռ մուտք չէր գործել Հայաստան, եւ երկրում հեթանոսությունն էր տիրում: Իհարկե կարելի էր ենթադրել, թե Գրիգոր Պարթեւը հիշատակում է ո՛չ թե հայ ժողովրդի, այլ իր սեփական պարթեւ նախնիների գրադաշտական կրոնը եւ մոխրապաշտությունը: Բայց իրականությունն այն է, որ նա նկատի ունի առհասարակ մարդկային ցեղի հեթանոս նախնիների մոլորությունները, այդ թվում՝ «մոխրապաշտությունը»: Ճիշտ այդպես էլ հեթանոս Տրդատ թագավորն իր

գահակալության առաջին տարում, վերադառնալով Մեծ Հայքի մայրաքաղաք Վաղարշապատ, ողջունում է հեթանոս հայ ժողովրդին իր հայրենի պարթեւական աստվածների անունից. «Ողջոյն հասեալ եւ շինութիւն դիցն օգնականութեամբ, լիութիւն պարարտութեան յարոյն Արամազդայ, խնամակալութիւն յԱնահիտ տիկնոջ, եւ քաջութիւն հասցե ձեզ ի քաջն Վահագն ամենայն Հայոց աշխարհիս. իմաստութիւն Յուսաց հասցե դաստակերտիդ կայսերաց, եւ ի մեր դիցախառն Պարթեւաց հասցե այցելութիւն, ի փառաց թագաւորաց եւ ի քաջ նախնեաց» (Ագաթ. պրգ. 127):

4. Առհասարակ արեւմտյան հայագետները Գրիգոր Լուսավորչի

Վարդապետությանը եւ ճառերին ծանոթ են սոսկ հպանցիկ՝ հայերեն Ագաթանգեղոսի Պատմության մակարդակով, չնայած գերմանացի աստվածաբան, հայագետ Միխայել Յոհան Շմիդտը (1843-1904 թթ.) դեռ 1872 թվին գերմաներեն թարգմանությամբ լույս ընծայեց նրա «Հաճախապատում ճառեր»-ը՝ իր առաջաբանով, ծանոթագրումներով եւ Սուրբ գրոց վկայությունների հղումներով: Այստեղ տարբեր առիթներով շեշտվում է այն միտքը, որ Արարիչը, նույնիսկ հեթանոսության շրջանում, անտես չի առնում ազգերին եւ մարդկանց, չնայած նրանք դեռ չեն ճանաչում Արարչին իրենց գիտակցությամբ, բայց Նրա խնամակալությամբ՝ բնության օրենքներով են կազմակերպում իրենց հասարակական կյանքն ու կենցաղը. «Եւ այս ամենայն կարգը ի շինութիւն աշխարհի կարգեալ են ի տեառն ըստ նախախնամութեանն որ առ ազգս մարդկան. թեպէտ եւ ոչ ծանեան զԱստուած եւ փառաւորեցին կամ գոհացան, զի ոչ խնդրեցին զԱստուած ունել ի գիտութեան (իմա՛ ի գիտակցութեան) [...] Այլ ոչ անտես առնել արարիչն զարարածս, զի հայր է շնորհիւ եւ տէր» (Սրբոյ Հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսավորչի Յաճախապատում ճառք Լուսավորք. Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1894 (ՌՅԿԳ), Ճառ Ը, էջ 89): Օրինակ, պարսիկների մասին, որոնք գիր չունեին եւ բնության օրենքով էին վարում իրենց արդարադատությունը, Գրիգոր Պարթեւը այսպիսի բարձր գովեստով է արտահայտվում. «Նա եւ Պարսիկք եւ այլ խուժադուժ ազգք, որ ոչ գիտեն զօրէնս, բնութեամբ զօրինացն գործեն [...] եւ ի ձեռն դատաւորաց պատժեն զպիղծս եւ զանիրաւս: Եւ միշտ սպառնալիք իշխանաց եւ դատաւորաց առ անխտիրսն ի չարիս, առ սուտս եւ երդմնասուտս, նենգաւորս, գողս, սպանողս. շունս, կախարդս, դիւթս, եւ որ ի նոյնս են հոյլք մեղաց [...]:

Շարունակությունը՝ էջ 6

ՀՀ ԶՈՒ խաչվառների օրհնության կարգ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Սկիզբը՝ էջ 3

խաչվառները, որ գետնովելու են մարտական դրոշի մոտ, մեր զինվորների համար լինելու են քաջակերություն՝ առ Աստված հավատքով, սրբոց բարեխոսությամբ ամուր եւ ուժեղ լինելու ծառայության մեջ: Հավատքով գործող զինվորն ուժեղ է կյանքում ու մարտում, սրբությունների պաշտպանության իր բարձրագույն առաքելության մեջ: Հոգու գորությունն է, որ ուժ է տալիս, պարգևում արի սիրտ ու խիզախ ոգի, առաջնորդում սխրանքների, անօրինակ հերոսությունների: Առաքյալը, Աստծո հաղթանակաբեր աջակցության մասին հայտարարելով, բացականչում է. «Եթե

Աստված մեր կողմն է, ո՛վ կլինի մեզ հակառակ» (Հռոմ. 8. 31): Գիտցե՛ք, սիրելի զորականներ, Աստված ձեզ հետ է օրհնված խաչվառների նշանով, մեր Սուրբ Եկեղեցու հայցով, մեր եկեղեցական սպասավորների աղոթքներով, ձեր հավատքով ու սրբերի բարեխոսության խնդրանքով: Տիրոջով հաղթական պիտի լինեք եւ ձեր սրբազան գործը փառքով ու պատվով իրագործեք, ձեր սրբազան ծառայությունը ձեռքբերումներով զարդարեք, հայրենիքի սահմանները աննահանջ պաշտպանեք՝ վաստակելով նաեւ Աստծո օրհնությունը ձեր կյանքի, ձեր ազգասիրության ու հայրենասիրության համար:

Մեր աղոթքն է առ ամենագոր Տերը, որ իր Սուրբ Աջով մշտապես օգնական ու զորակից լինի ձեզ, պահի ու պահպանի ամենքիդ երեւելի ու աներեւոյթ թշնամիներից: Աղոթում ենք, որ Աստված հզոր ու հաղթական պահի Հայոց բանակը եւ պարզեւի աննվազ կորով, անպարտելի ոգի եւ ամուր բազուկ՝ քաջարի ծառայության ճանապարհին: Այլեւ հայց ենք բարձրացնում աշխարհի խաղաղության, ժողովուրդների բարօր ու ապահով կյանքի համար: Թող մեր երկիրը մեր խիզախ զորաց պաշտպանությամբ ապահով ընթանա դեպի նոր առաջընթաց եւ լուսավոր ապագա:

Փա՛ռք արդարության ու խաղաղության պաշտպան ու պահպան զորականներին, փա՛ռք հայոց պանծալի բանակին:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս ձեզ զորակից ու պահպան այսօր եւ միշտ. ամեն», - ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Այնուհետեւ ՀՀ ՉՈՒ զորամիավորումների հրամանատարները եւ ՀՀ ՊՆ վարչության պետերը գեղերեցների հետ միասին մոտեցան Հայոց Հայրապետին՝ ստանալով հայրապետական օրհնությունն ու բաշխվող՝ տերունի եւ Հայոց Եկեղեցու սրբերի պատկերներով խաչվառները:

Արարողությունն ավարտվեց Հայոց Հայրապետի Պահպանիչ աղոթքով:

Լրատվական կյութերը՝ ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿՐԳԻ



Ե. ՉԱՐԵՆՑԻ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին

Սկիզբը՝ թիվ 14-17

Իր մի բանաստեղծության մասին Չարենցը թողել է այսպիսի հիշատակություն: 1932 թ. օգոստոսի 8-ին Նվարդ Թումանյանի ալբոմում գրել է. «Շրջել է այստեղ Տերյանը, // Մշուշը նրան գուրգուրել է.- // - Անհուն է օրերի երգարանը // Եվ երգ են անցած օրերը...»: Այնուհետև ավելացրել՝ «Այս վերջին քառյակն է Տերյանի մասին գրված (Լենինգրադում) մի բանաստեղծության, որը կորել է: Ե. Չարենց» (Հուշեր եղիշե Չարենցի մասին, էջ 362):

Չարենց-Տերյանի արտակարգ հետաքրքրական գրական առնչությանն այս բանաստեղծությունը նոր էջ կավելացներ:

1935 թ. հուլիսի 9-ին, գրողների խմբի կազմում, Մոսկվայում Չարենցը հանդիպել է Ռոմեն Ռոլանին: Այնուհետև՝ 1935 թ. սեպտեմբերի 30-ին, որպես Հայաստանի պետական հրատարակչության գեղարվեստական բաժնի վարիչ, ենթադրաբար Չարենցն էլ նամակով դիմել է Ռոլանին՝ ստանալու նրա համաձայնությունը՝ «Ժան Զրիստոֆ» վեպը հայերեն թարգմանելու համար, եւ թե՛ ցանկանալ, գրի նաեւ հրատարակչության առաջաբանը: Չարենցի ենթադրական նամակը հասել է հասցեատիրոջը, ինչին ի պատասխան՝ 20 օր անց Ռոլանը գրել է.

«Վիկտոր, Վիլյա Օլգա
20 հոկտեմբերի, 1935 թ.

Սիրելի ընկեր,

Այսօր միայն ստացա Ձեր՝ սեպտեմբերի 30-ի նամակը: Ուրախ եմ իմանալու, որ իմ «Ժան Զրիստոֆը» թարգմանվելու է հայերեն: Հաճույքով թույլատրում եմ թարգմանել եւ իմ ողջույնն եմ հղում Ձեր նշանավոր Հայոց երկրին, որ առանձնապես սիրելի է երաժշտի

իմ սրտին իր գողտրիկ երգերով, որոնցով վաղուց հիացած եմ: Դրանք հրապույր ու մեղեդային մի հարստություն ունեն, որոնք Ձեր երկիրը երաժշտության տեսակետից դարձնում են մի խորհրդային Իտալիա:

Բարի՛ եղեք հավատալ, սիրելի ընկեր, իմ եղբայրական անձնվիրությանը:

Բարի եղեք լույս տեսնելուն պես ինձ ուղարկել «Ժան Զրիստոֆի»-հայերեն հրատարակչությունից երկու օրինակ: Ինձ անհրաժեշտ է նաեւ ճշգրիտ իմանալ հրատարակչության անունը եւ վայրը՝ մատենագիտական նկատառումներով (անշուշտ, Խորհրդային Հայաստանի պետական հրատարակչությունն է):

ՌՈՄԵՆ ՌՈԼԱՆ:

Այս նամակը «Առաջաբանի փոխարեն» վերնագրով տպագրվել է «Ժան Զրիստոֆի» 1937 թ. հրատարակչության 1-ին հատորում: Նամակից առաջ Հայպետհրատի կողմից գրված է՝ «ՀՍԽՐ պետհրատը դիմել էր Ռոմեն Ռոլանին՝ խնդրելով «Ժան Զրիստոֆի» հայերեն թարգմանության համար առաջաբան գրել: Այդ դիմումին ի պատասխան՝ պետհրատը ստացել է հետեւյալ նամակը»:

Չարենցի անունը չի հիշվում, որովհետեւ արդեն 1937 թիվն էր: Իսկ Ռոլանի ակնարկած «սիրելի ընկերը» ենթադրաբար հենց ինքը՝ Չարենցն էր, ով էլ, դարձյալ ենթադրաբար, նամակով դիմել էր նրան: Այդ նամակը պետք է գտնվի Ռոլանի պահոցում: Այդ մասին վկայել է նաեւ «Ժան Զրիստոֆի» թարգմանիչներից մեկը՝ Լեւմել Մարությանը: Ես դեռեւս 1997-ին դիմել եմ Փարիզում ապրող իմ ծանոթներին՝ այդ նամակը գտնե-

լու եւ տեղեկացնելու խնդրանքով, բայց դեռեւս պատասխան չկա:

1937 թ. հունիսի 1-ին ՀԿ(Բ)Կ կուսկոլեգիային հասցեագրած «Դիմումի» մեջ Չարենցը գրել է. «ՍԵՆՍԱՑԻԱ. Նաիրի Չարյանին կոմունիստական կուսակցության մեջ ընդունելու համար երաշխավորել են... Ի՞նչ եք կարծում - ովքե՞ր... Իմացեք.- 1. Աշոտ Հովհաննիսյանը եւ 2. ... Ավա՛ղ ... Ինքս... - այսինքն՝ եղիշե Չարենցը... Գտե՛ք Կենտկոմի արխիվում այդ պատմական դոկումենտը - եւ կտեսնեք, որ, ավաղ, դա այդպե՛ս է...» (Ե. Չարենց, Նորահայտ էջեր, 1996, էջ 253):

Չարենցը Ն. Չարյանին կուսակցության մեջ ընդունելու համար կարող էր երաշխավորել 1921-ի կեսերից մինչեւ 1926-ի սեպտեմբերը, երբ ինքը չէր հեռացվել կուսակցության շարքերից: Բայց հավանականն այն է, որ գրած լինի 1922-1923 թթ., երբ նրա եւ Ն. Չարյանի հարաբերությունները դեռեւս սրված չէին թշնամանքի աստիճանի: Այս երաշխավորագիրը գտնելու իմ որոնումներն առայժմ արդյունք չեն տվել:

Գ. Եմինի պահոցի մասին խոսեցինք: Նա հաճախակի հիշատակում է նաեւ Վիգեն Խեչումյանի անունը, ում հետ համատեղ են գործել: Ուստի կարելի է ենթադրել, որ չարենցյան մասուկներ պետք է մնացած լինեն նաեւ Վիգեն Խեչումյանի գրողներում:

Ըստ Սեմյոն Հախումյանի՝ 1970-ական թթ. իր հայրը՝ Տիգրան Հախումյանը, իրեն հասցեագրած՝ Չարենցի 20-ից ավելի նամակ հանձնել է ինչ-որ հասցեով. թե ո՛ւմ, հայտնի չէ: Համենայնդեպս, դրանց հետքերը չկան ո՛չ ԳԱԹ-ում, ո՛չ Չարենցի տուն-թանգարանում: Այդ նամակներից մի քանիսն էլ, ավելի բաց բովանդակու-



թյամբ, մնացել են Հախումյանների տանը եւ կորել: Տ. Հախումյանին հասցեագրած՝ Չարենցի նամակներից միայն երկուսն են տպագրվել «Երկերի ժողովածուի» 6-րդ հատորում: Մնացածի ճակատագիրը, ահա, անհայտ է: Անփութության «հեղինակը» որդի Հախումյանն է, որ հաղթ է բերել մտավորականին ոչ վայել բարեխղճություն:

Ավագանի հուշերից պարզ է դառնում Չարենցի չիրականացրած ծրագրերից մեկը եւս: Հայտնի է, որ Ա. Բակունցը գրել է «Երիմեյան մանրե» վերնագրով երգիծական վիպակ: Այդ մասին հիշատակում են թե՛ Բակունցը, թե՛ հուշագիրները: Բակունցն այդ վիպակի մասին մանրամասն գրում է բանտից հանրապետության ղեկավարությանը հասցեագրված՝ «6.07.1937» թվակիր «Դիմումի» մեջ (տե՛ս մեր կազմած եւ հեղինակած «Ավսել Բակունց: «Ժառանգություն» (1999), նաեւ՝ «Ավսել Բակունց: Կյանքը եւ ստեղծագործությունը» (2009) գրքերում): Այս վիպակի եւ չարենցյան մեկ այլ մտահղացման մասին հիշատակում է նաեւ Ավագանը. «Բակունցը խիստ քննադատում էր ուրիշ մտավորականների մոտ նկատվող բացասական երեւոյթները եւ խարազանում դրանք: Այդ նպատակով նա որոշել էր գրել սատիրական մի վեպ՝ «Երիմեյան

բացիլ» վերնագրով: Ոգետրվելով Բակունցի նախաձեռնությունից՝ Չարենցն էլ որոշել էր նույն հարցի մասին գրել սատիրական մի պոեմ՝ «Վայ-վայ ցեղի պատմությունը» վերնագրով» (Ավագան, Հուշեր, 1967, էջ 276-277): Բակունցը գրել է իր այդ երկը, բացառված չէ, որ Չարենցն էլ իրականացրած լիներ իր մտահղացումը, քանի որ արագ եւ անմիջական գործողությունը բնորոշ էր նրա ստեղծագործական խառնվածքին:

Ավագանը շարունակում է. «Սակայն իրարորություններն այնպես դասավորվեցին, որ ո՛չ Բակունցը կարողացավ գրել իր վեպը, ո՛չ էլ Չարենցը՝ իր պոեմը» (նույն տեղը): Փաստերը վկայում են, որ Բակունցը գրել է իր երկը, իսկ Չարենցը... Ուրեմն՝ «Վայ-վայ ցեղի պատմությունը» պոեմ:

Հայտնի է, որ բանտում Չարենցը գրել է բազմաթիվ ստեղծագործություններ: Չարենցի հետ բանտարկվածներն իրենց վկայություններում մեկ անգամ չէ, որ խոսում են այդ մասին: Վաչե Արզարյանի հուշերում պահպանվել է Չարենցի այս խոսքը. «Իմ նոր պոեմը կկարդաք ազատվելուց հետո» (ԳԱԹ, ՀՖ, թիվ 211): Բանտում գրած գործերը, ինչպես նշեցինք, ըստ Ե. Հովհաննիսյանի, պահպանվել են:

Շարունակությունը՝ էջ 7



Գրիգոր Նարեկացին բոլոր ազգերի ու ժամանակների լուսապսակ դեմքերից է, մեր ազգի գոյությունն արդարացնող երեւոյթներից: Նա եւ իր թողած անմահ գործերն ի սկզբանե սրբացվել են իրեն ծնող ժողովրդի կողմից, արժանացել նաեւ օտարերկրի հետաքրքրությանն ու հիացմունքին: Նարեկացու երկերը, ամբողջական թե՛ հատվածաբար, հայոց մեջ ամենաշատ լույս ընծայվածներից են: Նրա ստեղծագործական ժառանգությունը, հատկապես «Մատենան ողբերգութեան» պոեմը կամ «Նարեկ»-ը, որ հայ միջնադարյան գրչաշխարհում ամենատարածվածն էր «Մաղմուսարան»-ից ու «Նոր Կտակարան»-ից հետո եւ ստացել էր «Հայոց Ավետարան» անվանումը, այնքան խոր ու բազմաբովանդակ է, որ առնչվում է մի շարք այլ բնագավառներ-

Թանկագին ընծա նարեկացիագետներին եւ ոչ միայն

րի. դրանով է բացատրվում ամենատարբեր ոլորտների հայ եւ այլազգի շատ մասնագետների ու հետազոտողների չմարող հետաքրքրությունը մեր անգուցական աստվածային հանճարի գրական վաստակի, հատկապես «Նարեկ»-ի նկատմամբ. Նարեկացու եւ իր երկերի վերաբերյալ ստեղծվել է լեռնակուտակ գրականություն: Բնականաբար վաղուց առաջացրել էր Նարեկացու երկերի, նաեւ դրանց վերաբերյալ եղած ուսումնասիրությունների մատենագիտությունը կազմելու անհրաժեշտությունը. այդ առաքելությունն ստանձնել է մեծ բարեխղճությամբ ու բարձր մակարդակով իրականացրել է գրադարանային գործի նվիրյալ, Արարատյան հայրապետական թեմի գրադարանավարուհի Աստղիկ Ղափլանյանը:

Մատենագիտությունն ընդգրկում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի 1173 թ. ընդօրինակված թիվ 1568 ձեռագրից մինչեւ 2014 թ. տպագիր հրատարակությունները: Սա առաջին մատենագիտությունն է, որտեղ նշված են նաեւ ձեռագրերը: Ձեռագրացուցակների, տեղեկատու հրապարակումների օգնությամբ տրված է հաշվառված ձեռագիր եւ տպագիր միավորների բովանդակ հարստությունը:

Համաձայն ձեռագրացուցակների՝ ներկայացված են Նարեկացու ստեղծագործությունները, նրա կենսագրության հետ կապված յուրաքանչյուր տեղեկություն: Մասնավոր բժախնորությամբ ներկայացված են «Մատենան ողբերգութեան» պոեմի բոլոր ձեռագրերն ու տպագիրները. Աստղիկ Ղափլանյանը ձեռագրացուցակներից հա-

նել է «Նարեկ»-ների ամբողջական 204 միավոր, որից 7-ը՝ տաճկերեն, 1-ը՝ արաբերեն: Մատենագիտության մեջ տեղ գտած հատվածական «Նարեկ»-ները կազմում են 110 միավոր: Արձանագրված են նաեւ «Գանձեր»-ը՝ 68 միավոր, «Տաղեր»-ը եւ «Փոխեր»-ը՝ 516 միավոր: «Երգ երգոց»-ի մեկնության քննական բնագրի ներածության մեջ (Մատենագիրը հայոց: ԺԲ հտ., Ժ դար, Գրիգոր Նարեկացի., Ե., 2001.- էջ 757-759) հիշատակված է այդ երկի 72 միավոր, հեղինակի կատարած աշխատանքի արդյունքում հայտնի է դարձել «Երգ երգոց»-ի մեկնության 94 միավոր: «Նշխարներ ս. Գրիգոր Նարեկացու ստեղծագործություններից» բաժնում վեր է հանված 575 ստացվածքներով ձեռագիր միավոր: Նշված է հայ միջնադարյան իրականության մեջ շատ տարածված ձեռագիր հմայիլների (որոնցում մշտապես տեղ են գրավել «Նարեկ»-ի ԺԲ եւ ԽԼ գլուխները) 43 միավոր: Նշված են նաեւ «Մատենան»-ից հատվածներ պարունակող տպագիր հմայիլները:


Մատենագիտության մեջ արձանագրված են «Մատենան»-ի բազմաբարդ աստվածաբանության բացատրությանն ուղղված ինչպես միջնադարյան լուծումները, այնպես էլ Հակոբ Նալյան պատրիարքի (1745 թ.) եւ հայր Գաբրիել Ավետիքյանի (1801, 1827 եւ 1859 թթ.) մեկնությունները: Հաշվի առնելով նյութի կարեւորությունը՝ աշխատության մեջ նշված են այն հետազոտությունները, որոնցում խոսվում է «Նարեկի»՝ հայ գեղարվեստական գրականության, բանախոսության եւ արվեստի

վրա ունեցած ազդեցությունների մասին: Ընդգրկված են նաեւ Նարեկացու ժառանգության այլալեզու թարգմանությունները: Բերված է նրա վաստակին նվիրված ուսումնասիրությունների մատենագիտությունը:

Աստղիկ Ղափլանյանը, մատենագիտության լեզվով ասած, մատենագիտության մեջ ստեղծել է մատենագիտություն, այն է՝ մատենագիտական միավորները բաժանել է ըստ բնագավառների կամ ըստ թեմաների. Նարեկացին՝ փիլիսոփա (հոգեբան), մարդասեր, Նարեկացին եւ աղանդավորությունը, Նարեկացու միստիցիզմը (ծածկագրություն, թվերի եւ տառերի խորհրդաբանություն), դավանությունը, լեզուն եւ ոճը, «Նարեկ»-ը՝ բժշկարան, ավանդապատումներ, հրաշքներ եւ այլն, ինչն ավելի դյուրին է դարձնում հետազոտողների գործը: Գրքում տեղ են գտել նաեւ «Ս. Գրիգոր Նարեկացին եւ համաշխարհային գրականությունը», «Նշանավոր մարդիկ ս. Գրիգոր Նարեկացու մասին» բաժինները, վերջում բերված են տեղեկատվական նյութեր:

Մատենագիտությունն ունի անվանացանկ, որտեղ հիշատակված են Նարեկացուն ու նրա արվեստին առնչված բոլոր անձանց ազգանունները՝ գրախոսողներ, խմբագիրներ, նկարիչներ եւ այլն:

Մատենագիտության մեջ գետնդրած են լուսանկարներ, որոնցում ներկայացված են ս. Գրիգոր Նարեկացու ճգնարանը, ճգնարանի հատակագիծը, Գրիգոր Մլիճեցու՝ Նարեկացու պատկերը բովանդակող երկու մանրանկարները: Շարունակությունը՝ էջ 8



Միջնադարում՝ սկսած տասնեորորդ դարից, գրականության վրա զգալի է դառնում աշխարհիկ բովանդակության ազդեցությունը: Ծնվում է անձնական քնարերգությունը, որի համար նյութ են դառնում բանաստեղծի հուզաշխարհն ու զգացմունքները (Գր. Նարեկացի, Ն. Շնորհալի, Ֆրիկ): Միջնադարյան պոեզիան, սակայն, հատկապես աչքի է ընկնում սիրո երգերով, ինչը մեր գրականության մեջ սկսվում է Նախ Աստվածածնի գովքով, ապա՝ վարդ ու սոխակի սիրո այլաբանությամբ: Դեռենս Գրիգոր Նարեկացին, իր տաղերում գովերգելով Մարիամ Աստվածածնին կամ երգելով Զրիստոսի հարությունը, օգտագործում է աշխարհիկ պատկերներ, իսկ արդեն Կոստանդին երգակացին առաջին էր, որ սկիզբ դրեց բնապաշտական եւ սիրային քնարերգությանը: Ըստ նրա՝ բնությունը սեր է, սեր է առաջացնում մարդկանց մեջ, ամեն ինչ սիրո ծնունդ է: Նա բնությունը միջոց է դարձնում՝ պատկերելու սիրած կնոջ գեղեցկությունն ու հմայքը, իսկ վարդի ու սոխակի սիրո մոտիվին դիմելով՝ ստեղծում է լաւե այլաբանական տաղեր: Եթե երգակացին ավելի հոգեւոր սիրո երգիչ է, քանզի սերը նրա համար աստվածաշին ուժ է, հավերժ կենդանության աղբյուր, ապա Հովհաննէս Թլկուրանցու համար սերը ֆիզիկական բռնկում է, որ այրում է երգչին: Նրա երգի մեջ մարդը երկնային ոլորտները իջնում է իրական աշխարհ եւ վայելում կյանքի հաճույքները: Այդ վայելքի մեջ բնությունը չէ, որ էա-

կան տեղ է գրավում, այլ մարդու մարմինը: Թլկուրանցու ստեղծագործության հիմնական գծերը շարունակում է Գրիգորիս Աղթամարցին: Նրա տաղերում թախիծ գրեթէ չկա, ավելի շատ գրել է զարնան ու սիրո երգեր, նկարագրել կնոջ արտաքին բարեմասնությունները: Ըստ Աղթամարցու՝ գեղեցիկ կյանքը երկրի վրա է եւ ոչ թե երկնքում: Ամփոփելով Նախորդ շրջանի աշխարհիկ նվաճումները՝ միջնադարյան քնարերգությանը նոր որակ է տվել Նահապետ Զուլալն իր հայրեններով: Հայրենը միջնադարյան բանաստեղծության տեսակ է՝ բաղկացած չորս տասնհինգ վանկանի տողերից: Երբեմն տողերը երկարում են (յոթ-ութ վանկ)՝ գրելով ութ տողով: Դրանք հիմնականում սիրային, պանդխտության եւ խոհախրատական թեմաներով հորիված տաղիկներ են: Հայրենները գեղարվեստական բարձր հատկություններով օժտված արժեքներ են, «Հայ քնարերգության ամենաազնայնի գանձերը», ասել է Վալերի Բրյուսովը: Զուլալի քառյակները մեծ մասամբ սիրո երգեր են, որտեղ նա բացել է մարդու հոգեկան աշխարհը, առավել գունեղ ներկայացրել այն սոցիալական միջավայրն ու շրջապատը, ուր ծնվել ու ապրել է սերը: Հայրեններում նրա պատկերած կինն ինքնուրույն գործող անձ է՝ խոսքի իրավունքով, իրեն հատուկ հոգեկան աշխարհով, ինչն էլ հնարավորություն է տալիս հերոսներին ներկայանալ իրական կյանքի փոխարարբերությունների մեջ՝ հույզերի ու ապրումների

Նահապետ Զուլալի. սիրո մեծ երգիչը

փոխադարձ ու ամենաբազմազան դրսևորումներով: Նահապետ Զուլալի մասին գրել են շատ հեղինակներ, որոնք գնահատել են նրա պոեզիան, անդրադարձել անհատականությանը: Բանասիրության մեջ եղել են ու կան տարակարծություններ՝ եղել է արդյո՞ք Նահապետ Զուլալ անունով հեղինակ եւ ո՞ր դարում է ստեղծագործել: Թեեւ առաջին անգամ Զուլալի անունը հիշատակել է Ղեւոնդ Ալիշանը (1870 թվական) (*Ղ. Ալիշան, Հուշիկը հայրենեաց հայոց, հ. Բ, Վենետիկ, 1870, էջ 126*), սակայն նրան վերագրված երգերը հավաքել ու հրատարակել է Արիստակես վրդ. Տեկևանցը: Նա նույնիսկ առանձնացրել է ե՛ւ պապ, ե՛ւ թոռ Զուլալների երգերը («*Հայերգ.մեղեդիք, տաղք եւ երգք, հավաքեց եւ հրատարակեց Արիստակես վ. Տեկևանցը, Թիֆլիս, 1882*): Մինչ Տեկևանցի «Հայերգը», Զուլալի կենսագրական փաստերից հայտնի էին մի հիշատակարան, որը գրել էր նրա թոռը, եւ Զուլալի գերեզմանաքարը՝ Ս. Թեոդորս վանքի պարիսպների տակ: Տեկևանցը հայտնել է, որ գոյություն ունի երկու ձեռագիր օրինակ եւս՝ հազար յոթ հարյուր քառասունվեց թվականին Պետրոս Երեցի կողմից ընդօրինակած, որոնցից էլ օգտվել է ինքը: Ձեռագրերը, սակայն, հետագայում՝ Վարազմ վանքի հարձակումների ժամանակ, ոչնչացվել են: Տեկևանցի ավանդը շարունակել է Արշակ Զոպանյանը՝ շուրջ քառասուն տարի զբաղվելով քուլակագիտությամբ: Նա ոչ միայն տարբերակել է բանաստեղծի եւ ժողովրդական երգերի յուրահատկությունները, այլեւ հպարտությամբ խոսել օտար հեղինակների արձագանքների մասին, որոնք ընդունել են Զուլալի մեծությունը (*Նահապետ Զուլալի դիվանը, աշխատասիրությամբ՝ Արշակ Զոպանյանի, Փարիզ, 1902*): Պետք է նկատի ունենալ նաեւ, որ, ըստ Արփիար Արփիարյանի, պատմաբան-բանասեր Նորայր Բյուզանդացին դեռեւս տասնիններորդ դարի վաթսուհին յոթնասունական թվականներից զբաղվել է Զուլալի հայրեններով՝

դրանց մի մասը համարելով լաւե Ակնի «անտունիները» (*«Շիրակ», համար 8, Ալեքսանդրիա, 1905, էջ 123-126*): Սակայն, եթե Տեկևանցը, Բյուզանդացին ու Զոպանյանը ձգտել են ապացուցել հայրենների հեղինակի անհատականությունը, ապա այլ էին Մ. Աբեղյանի, Ա. Մնացականյանի կարծիքները: Վերջիններս ձգտում էին հայրենները դարձնել բազմաթիվ հեղինակների ստեղծագործություններ: Մանուկ Աբեղյանն առաջիններից մեկն է եղել, որ ընդունել է հայրենների անհատական բնույթը, Զուլալին համեմատել Նարեկացու հետ՝ նշելով նրանց արվեստի ե՛ւ նմանությունները, ե՛ւ տարբերությունները: Նա Զուլալին համարել է «երկրավոր սիրո երգի մեծ վարպետ», իսկ Նարեկացուն՝ «երկրավոր սիրո» (*Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ.2, Եր., 1945, էջ 15-16*): Հետագայում Աբեղյանը փորձել է գտնել կենսագրական փաստեր եւ չգտնելով իր ուզածը՝ մերժել Զուլալի հեղինակային անհատականությունը: Ըստ Աբեղյանի՝ ստահող բանասիրությամբ Զուլալին է վերագրել ե՛ւ Տեկևանցի «Այս ծովական գիշերս...» տաղաշարը, ե՛ւ բազմաթիվ երգեր, որոնք անանուն են ձեռագրերի մեջ (*Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. 2, Եր., 1967, էջ 15-16*): Աբեղյանի կարծիքի հետևորդներից է եղել Ասատուր Մնացականյանը: Նա եւս կրկնել է այն միտքը, որ եթե ձեռագրերում գրված չէ Զուլալի անունը, ուրեմն դրանք ժողովրդական երգեր են (*Ասատուր Մնացականյան, Էջեր հայ ժողովրդի պատմության եւ բանասիրության, Եր., 1971, էջ 96-126*): Մեր օրերում արեղյանական տեսակետին է հետեւում բանասեր Վանո Եղիազարյանը (*Վանո Եղիազարյան, Հայրեններ, Վանաձոր, 2007*):

Հայտնի են նաեւ Զուլալի մասին պատմող մի շարք ավանդություններ, ավանդապատումներ, որոնք իրենց մեջ ունեն նաեւ ճշմարտության հատիկ: Դրանք պատմել են Խրիմյան Հայրիկը, Նաիրի Չարյանը, Սերինեն: Այդ ավանդությունները ճշգրիտ տեղեկություններ են տալիս հանճարեղ աշուղի գոյության, ծննդյան, մահվան մասին: Ընդունելի է, որ նա տասնվեցերորդ դարի հեղինակ է, ծնվել է Վանի Խառակոնիս գյուղում, թաղված է Սուրբ Թեոդորոս վանքի բակում: Ընդ որում՝ աշուղն ունեցել է ոչ միայն Զուլալ, այլ նաեւ Զուլուկ (պզտիկ), Զիլակ (ծաղկի պես գեղեցիկ) անվանումները: Արշակ Զոպանյանը Զուլալ անվան մեջ տեսել է երկու իմաստ՝ քեղեցի, որ նշանակել է կաքավող, լկտի պարեր պարող եւ քոչվոր, թափառական: Զուլալի ստեղծագործության մասին ջերմ կարծիքներ են հայտնել նաեւ օտարազգի շատ հեղինակներ, ինչպես՝ Վ. Բրյուսովը, Լեւ Օգերովը, Գ. Միտինը, Էդ. Մեծելայտիսը, Վ. Սարոյանը, որոնք ընդունել են Զուլալի հանճարը, արվեստի ուժը, դասել նրան աշխարհի մեծերի շարքը: Մեր նպատակն է բացահայտել Նահապետ Զուլալի անմահ հայրենների զգացմունքային ներաշխարհը: Իսկ թե դրանք պատկանում են Զուլալին թե մեկ այլ հեղինակի (քանզի դրանք մեկ անհատի հոգու ապրումներ են), մեր ուսումնասիրության խնդիրը չէ: Զուլալյան հայրենները հիմնականում սիրո երգեր են: Հայրեններում սիրո երգը միափյուսված է բնության երգին, բնությունը միջոց է՝ սիրած կնոջը պատկերելու եւ գովերգելու համար: Զուլալի հայրեններն ապշեցնում են իրենց բյուրեղացած սեղմությամբ, անակնկալ ու անսպասելի ավարտով, անչափ հյուսթեղ բանաստեղծական պատկերներով: Հեղինակն իր սիրտը համարում է սիրո օրրան կամ ակունք, որից բխում է սերը եւ տարածվում աշխարհով մեկ: Ամեն մարդ չէ, որ ընդունակ է սիրելու, դիմանալու սիրո ուժին: Սիրում են տառապելու ունակ գորեղ հոգիները: Սիրո այդ տառապանքն այնքան հրապուրիչ ու ցանկալի է, որ մարդն ինքնակամ գնում է դեպի նրա թակարդը: Զետ մանկակորուստ կաքավ ի լեռնն ի շուրջ կուգամ ես. Լքսեր եմ՝ ակնատ ունիս, բեր լարե՛, զամ ընկնեմ ի ներս: Հարունակությունը՝ էջ 7

Զեյմա Ռասսելը հայ ժողովրդի կրակապաշտության մասին

Սկիզբը՝ էջ 4
Իսկ որ խրատին եւ գան ի լաւութիւն կարգաց եւ իրաւանց թագաւորի ի միամտութեանն եւ ի հպատակութեան կացուցանեն գանձինս, այնպիսեացն փառք եւ պատիւ եւ պարգէնք ազատութեան շնորհեն: Դոյն օրինակ եւ յոյնք գրով կարգեալ ունին զիրաւունս. երախտաւորացն եւ մտերմիցն պարգեւօք եւ մեծարանօք պատուեն, իսկ անօրինացն եւ անհնազանդիցն եւ անբարիաւաճիցն եւ անառակիցն եւ պղծոցն պատուհասիւք եւ պատժովք եւ դառն նեղութեամբք նեղեն. զի խրատեսցին ի բաց կալ ի մեղաց եւ գործել զբարիս հանապազօր. զի մի՛ վրդովեսցի աշխարհս յանիրաւաց, այլ զխաղաղութիւն եւ զշինութիւն կալցի: Նոյնպէս եւ ամենայն ազգք եթէ ոչ կայցեն յիրաւունս արդար դատաստանին աստուծոյ [...]: (*Նույն տեղում, Ժառ Ը, էջ 88*):
5. Ստրաբոնն իր «Աշխարագ-

րության» մեջ նկարագրել է պարսից մոգերի կրակապաշտության զրադաշտական ծեսերը, որոնց նա անձամբ ականատես է եղել Փոքր Ասիայում՝ Կապադովկիայի տարբեր պարսկական տաճարներում մ. թ. ա. I դարում. «Կապադովկիայում (քանի որ այստեղ մոգերի մեծ դաս կա, որոնք կոչվում են այուրեթներ (կրակ վառողներ), եւ պարսից բազում աստվածների սրբավայրեր) դանակի փոխարեն [զոհ մատուցելիս] գործածում են ինչ-որ մահալ: Կան նաեւ պարսպով առանձնացված կրակարաններ՝ մեջտեղում գոհարան, վրան մոխրակույտ, որով մոգերը [իմայական աղոթքով] պահպանում են անշեշ կրակը: Ամեն օր մտնելով կրակարան, մոգերը այնտեղ մոտ մեկ ժամ հմայանքներ են արտասանում՝ կրակի առաջ բռնած ճյուղերի կապոց. գլուխները փաթաթած են թաղիքե փաթեթոցով, որի ծայրերն իջնում էին այտերով

ցած՝ ծածկելով շրթուները: Նույն ծեսերը կատարվում էին Անահիտի եւ Օմանոս [աստծո] տաճարներում: Եվ այստեղ էլ կային պարսպապատ սրբարաններ, որտեղ հանդիսավոր թափորով տանում էին Օմանոսի փայտաքանդակը: Այս ամենին ես անձամբ եմ ականատես եղել» (*Strabonis Geographica. Recognovit Augustus Meineke. Volumen tertium. Editio stereotypa. Lipsiae, in aedibus B.G. Teubneri. MDCCCXCVIII [1898]. Գիրք XV(IE), պրգ. 15, էջ 1021-1022: Ռուսերեն թարգմանությունը լրացված է թարգմանչի բացատրություններով*): Այստեղ Ստրաբոնը նկարագրում է նաեւ գրեթե հինգ դար հետո Եդիշեի Պատմության մեջ պարսից հազարապետ Միհրենեստեիի նամակում հիշատակված փանդամը (հուն. tiara - արեւելյան թասակ կամ գլխի փաթեթ), որով պարսից մոգերը ծածկում էին դեմքն ու բերանը ծեսի ժամանակ՝ ի-



րենց շնչով սուրբ կրակը չաղծելու համար: Չնայած Ստրաբոնն այստեղ խոսում է բացառապես պարսից մոգերի զրադաշտական ծեսերի մասին եւ վերջում մի անգամ եւս ընդգծում է, թե այս ամենին ինքն անձամբ է ականատես եղել, բայց Ռասսելն իրեն իրավունք է վերապահում այդ ամենը վերագրել նույնությամբ նաեւ

հայերին՝ հետեւելով իր մտապատկերում Նախապես ստեղծած «զրադաշտական Հայաստանի» իյուդիային, որը սակայն չի կարողացել փոքրիշատե համոզիչ կերպով իր մտապատկերից փոխանցել թղթին: Հարունակելի Աբեղյո ՄՈՒՇԵՐՅԱՆ Բանասիրական գիտ. դոկտոր

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ էջ 5

Չարենցի ձեռագրերի որոնումը պետք է շարունակվի նաեւ ԽՄԿԿ Կենտրոնի, Անդրֆեդերացիայի եւ Հայաստանի տարբեր պահոցներում: Անպայման չարենցյան նյութեր կհայտնաբերվեն Ի. Ստալինի, Լ. Բերիայի, Ա. Միկոյանի, Ա. Խանջյանի, Ամատունու, Մ. Շահինյանի, նաեւ 1920-1930-ական թվականների այլ գրողների ու քաղաքական գործիչների դիվաններում: Անպայման ինքնագրեր կլինեն հարազատների ընտանեկան պահոցներում: Այնպես որ, հանուն Չարենցի եւ հանուն չարենցագիտության՝ որոնումները պետք է շարունակել, որովհետեւ Չարենցի դեպքում յուրաքանչյուր պատառիկ հույժ կարետոր նորություն է բերում եւ որեւէ մանրամասնով լրացնում կա՛մ նրա կյանքի, կա՛մ նրա ստեղծագործության որեւէ անհայտ էջը:

Գ. ԻՆՆԷ Ե ՍԱԿԱՎԻՄ ՉԱՐԵՆԿԻ ԻՆՔՆԱԳՐԵՐԻՆ: 2005 թ. լույս տեսավ Ե. Չարենցի «Կերքին խոսք» ժողովածուն, ինչը բացվում է «Խոհ» (1936) անտիպ բանաստեղծությամբ. այդ կապակցությամբ տողատակում նշվում է, որ անտիպները պահվում են Ա. Շ.-ի արխիվում:

Եմիլյան հավաքածուից այս գրքում գետեղված են առանձին բանաստեղծություններ, սակայն գրքի այլ երկերի կապակցությամբ եւս ազդարարված է, թե դրանք տպագրվում են առաջին անգամ, ինչն ապակողմնորոշիչ տեղեկատվություն է. հրատարակիչն այդպես է վարվել միամիտ ընթերցողի վրա ազդեցիկ տպավորություն թողնելու համար, քանի որ դրանք արտատպված են «Նորահայտ էջեր» գրքից, որտեղ ձեռագրերի վերծանման հսկայական աշխատանք է կատարվել:

Այստեղ էականը «Խոհ» անտիպ բանաստեղծության ծանոթագրությունն է:



Ո՞վ է այս առեղծվածային Ա. Շ.-ն: Առեղծվածը, բարեբախտաբար, շատ արագ բացահայտվեց. Ա. Շ.-ն Աշոտ Շաբոյան անունով մեկն էր:

2008 թ. սեպտեմբերի 10-ին Ե. Չարենցի անունը կրող ԳԱԹ-ում կազմակերպվեց Եմիլի թաքցրած՝ Չարենցի ինքնագրերի մի մասի վաճառքը թանգարանին: Ծավալը՝ 275 էջ, լավ պահպանված, բազմաթիվ նոր գործեր՝ պոեմներ, բանաստեղծություններ, նաեւ սեւագրեր, նաեւ այլ գործերի առանձին էջեր, պատառիկներ, տարբերակներ: Որպես սեփականատեր՝ հանդես եկավ Աշոտ Շաբոյանը: Ներկա էր նաեւ Եմիլի որդին, ով տվեց այսպիսի անպատեհ բացատրություն, թե՛ զոքանչս հիվանդ էր, բուժման համար նյութական միջոցներ էին անհրաժեշտ, եւ էլ եղածը վաճառեցի Շաբոյանին:

Հերթական ակնհայտ խաղն էր: Եմիլի որդին երեւի անհարմար զգաց այդ ինքնագրերը վաճառքի հանել իր անունից: Այլ կերպ՝ Աշոտ Շաբոյանն ու Արտաշես Եմիլը ներկայանում էին որպես նույն շա-

հագրադրությունների տերը, մասնավորապես որ գործարքներն էլ պետք է կատարվեին Եմիլի որդու անունով:

Գործարքի գինը՝ ութ միլիոն դրամ (մոտ 24000 ԱՄՆ դոլար):

Եվ հենց այստեղ էլ պարզվեց, որ այդ 275 էջն ամբողջը չէ: Ինքնագրերին արդեն տեղյակ եւ «Խոհը» տպագրած հրատարակիչը հարցրեց. «Իսկ այդտեղ կա՞ «Վարդենիկ» պոեմը»: «Վարդենիկ» պոեմը չկար: Ուրեմն՝ ինչ-որ բան այնպես չէր:

Նաիրյան այս գործառնություն արդեն նախորդել էր Ռաստի երկրորդ հրապարակումը, ինչից պարզվում էր, որ այդ 275 էջը շա՛րա՛տ հեռու է Չարենցի ամբողջ անտիպ ժառանգությունը ներկայացնելու հավակնությունից, եւ ազնիվ չէր ձեռագրերը վաճառողների պնդումը, թե՛ սա՛ է ամբողջը, եւ այլեւս ոչինչ չկա: Ռաստել մեզ հուշեց թաքնված գանձերի մասին, որի տեղն ինքն էր, բայց ոչ հայ չարենցագիտությունը: Հիմա արդեն իսկ պարզ է, որ Եմիլների պահոցում դեռեւս շատ բան կա, եւ պարտավոր են դրանք եւս հանել ասպարեզ: Հիշենք ու մտապահենք Արտաշես Եմիլի հողվածը «Ազգի» էջերում. «Չարենցի թղթապանակն իր բոլոր ձեռագրերով գտնվում է իմ տրամադրության տակ» («Ազգ», թիվ 70, 12. 04. 2008: Նախադասության «գրագիտությունը» հեղինակինն է):

Քանի որ Մշակույթի նախարարությունը տրամադրել էր պահանջվող ութ միլիոն դրամի միայն վեց միլիոն հինգ հարյուր հազարը, ուստի Չարենցի ինքնագրերի մի մասը մնաց վաճառողի արխիվում: Եվ միայն 2011 թ. օգոստոսին դրանք՝ 21 միավոր, ձեռք բերեց Մատենադարանը:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՊԵՐՍՈՆԱԿԱՆ ՎԹՈՒՍԱՎՈՐ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԹՆՈՒԹՅՈՒՆ

- Հայր, ինչո՞ւ եք խուցից հեռանում եւ գնում անտառ:

- Խցում որտեղի՞ց գտնես լուծություն: Մեկը մի տեղից է աղմկում, մյուսը՝ մի ուրիշ տեղից: Մի լավ տեղ եմ գտել ու եթե առողջ լինեմ, այնտեղ կկառուցեմ աղոթքի բունկեր, ռադար: Տեղանքը շատ հարմար է, ամառվա համար այն է, ինչ որ պետք է, կան ծառեր... Կարող եմ ուռքի վրա էլ մնալ: Եթե ես կարող եմ իրականացնել իմ՝ վանականի պարտականությունները, ապա դա իմ ուրախությունն է, իմ կերակուրը: Մի օր համեցե՛ք...

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

(Ծերի խոսքերից)

«Որպեսզի անցնես Աստծո հորհրդաբանը, պետք է դառնալ Աստծո «պատգամավոր», ոչ թե ինքը քեզ համար տաք տեղեր կազմակերպող»:

- Հայր, ինչպե՞ս եք նայում այն ամենին, ինչ կատարվում է:

- Իսկ դո՞ւք ինչպես եք նայում:
- Հայր, մենք ի՞նչ ասենք: Դո՞ւք եք մեզ ասում:

- Ինձ անհանգստացնում է տիրող խաղաղությունը: Ինչ-որ բան է պատրաստվում: Մենք ինչպես հարկն է դեռ չենք հասկացել, ո՛չ այն, թե ինչ դարում ենք ապրում, ո՛չ էլ այն, որ մահանալու ենք: Այս ամենից ինչ կստացվի, չգիտեմ, իրավիճակը շատ բարդ է: Աշխարհի ճակատագիրը կախված է մի քանի մարդուց, բայց Աստված դեռ պահում է արգելակը: Մենք պետք է շատ եւ սրտացավ աղոթենք, որպեսզի Աստված միջամտի կատարվող երեւոյթներին: Եռանդով կալչենք այդ գործին եւ սկսենք հոգեւոր կյանքով ապրել: Ժամանակը շատ բարդ է: Շատ մոխիր, աղբ ու անտարբերություն է կուտակվել, եւ որպեսզի այդ ամենը վերանա, պետք է մի լավ փչել: Ծերերն ասում էին, որ կգա ժամանակ, երբ մարդիկ կսկսեն քացի տալ: Եվ ահա՝ վե-

րացնում են ցանկապատերը, ոչինչ հաշվի չեն առնում: Սարսափելի է: Վրա է հասել բաբելոնյան խառնաշփոթը: Կարդացեք երեք մանուկների աղոթքը (Դան. 3.24-30, Ագարիայի աղոթքը եւ երեք մանուկների երգը) եւ կտեսնեք, թե ինչպիսի խոնարհությամբ էին նրանք աղոթում:

Եվ 82-րդ սաղմոսում էլ ասվում է. «Աստվա՛ծ, ո՞վ է Զեզ նման. մի՛ լռիր...»: Ահա սա է պետք, հակառակ դեպքում լավ բանի մի սպասեք: Հարկավոր է Աստծո միջամտությունը:

Հայտնվում են եվրոպական որոշ հիվանդություններ եւ ստանում ավելի ու ավելի խորացված ձեւեր: Անգլիայում ապրող մի կիպրոսցի ընտանիքի հայր ինձ ասաց. «Մենք հոգեւոր վտանգի ենք ենթարկվում: Պետք է ամբողջ ընտանիքով փախչել Անգլիայից»: Տեսնում ես՝ մի տեղ հայրն է ամուսնանում աղջկա հետ, մի տեղ՝ մայրը՝ որդու... Նման բաները, ինչ խոսք, ամոթալի են: Իսկ մենք քնած ենք գետնասկյուռների նման: Ես կոչ չեմ անում պաստառներ վերցնել, բայց ուշադրություն դարձնել գալիք ահեղի վտանգի վրա եւ բարձրացնել ձեռքերն առ Աստված: Մտածենք, թե ինչպես պաշտպանվել չարից: Անհրաժեշտ է ձգել արգելակները, որովհետեւ ամեն ինչ հողին հավասարեցնելու միտում կա: Հիմա ժամանակն է մարգարեի խոսքերով աղոթելու. «Նրանց իշխաններին արա՛ այնպես, ինչպես արեցիր Չեբեեին, Սաղմանային ու նրանց բոլոր իշխաններին, որոնք ասացին. «Մեր ժառանգությունը դարձնենք Աստծո սրբաբանը» (Սաղմ. 82.12-13):

Մեծ հուզումներ են տեղի ունենում, խառնաշփոթ: Մարդիկ չվարած են: Ժողովուրդը մեղուների նման է: Եթե խփես նրանց փեթակին, ապա մեղուները դուրս են թռչում, սկսում են բզգալ եւ անհանգստացած պտտվել փեթակի շուրջ: Հետո նրանք, կախված այն բանից, թե ինչպիսի քամի կփչի, ուղղություն կվերցնեն դեպի այդ կողմ: Եթե հյուսիսային՝ կվերա-

դառնան փեթակ, եթե հարավային՝ կթռչեն-կհեռանան: Այդպես էլ ժողովուրդն է, որին փչում է մեկ «հյուսիսային ազգային»ը, մեկ՝ «հարավային ազգայինը», եւ խեղճը շփոթված վիճակում է: Սակայն, չնայած այս շփաշփոթին, զգում եմ որոշ միախառնություն, որոշ վստահություն: Ձիթապտղի ծառը թելուզել չորացել է, բայց կտա նոր բողբոջներ: Կան քրիստոնյաներ, որոնց մեջ ապրում է Աստված: Կան նաեւ Աստծո մարդիկ, աղոթքի մարդիկ, եւ բարի Աստված հանդուրժում է մեզ եւ ամեն ինչ կրկին կարգի կբերի: Այսպիսի աղոթքի մարդիկ մեզ հույս են տալիս: Մի՛ վախեցե՛ք: Մենք, որպես ազգ, բազում փոթորիկներ վերապրելով, չկորսվեցինք: Ի՞նչ է, հիմա պիտի վախենա՞նք մի փոթորիկից, որն սկսելու է: Հիմա էլ չենք վերանա: Աստված սիրում է մեզ: Մարդու մեջ կա անհրաժեշտ թաքնված ուժ: Դժվար տարիները շատ չեն լինի: Միայն մի փոթորիկ:

Ես այս ամենը չեմ ասում, որ դուք երկնչեք, այլ որպեսզի հասկանաք, թե որտեղ ենք մենք գտնվում: Դա մեզ համար շատ բարենպաստ հնարավորություն է, դժվարությունների եւ մարտիրոսության ցնծություն: Եղեք Զրիստոսի հետ, ապրեք համաձայն Նրա պատվիրանների եւ աղոթեք, որպեսզի կարողանաք դիմագրավել դժվարություններին: Թողեք կրքերը, որպեսզի գա Աստծո Շնորհը: Եվ եթե մեզանում մուտք գործի բարի անհանգստությունը (այն բանի մասին, թե մենք որտեղ ենք գտնվում, եւ ինչ է մեզ սպասվում), ապա դա կօգնի մեզ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել եւ նախապատրաստվել: Թող մեր կյանքն ավելի չափավոր լինի: Ապրենք ավելի հոգեւոր կյանքով, լինենք ավելի ընկերասեր, օգնենք նրանց, ովքեր ցավ ունեն, օգնենք աղքատներին՝ սիրով, կարեկցանքով, բարությունով: Աղոթենք, որ հայտնվեն բարի մարդիկ:

Շարունակությունը՝ էջ 8

Նահապետ Բուչակ. սիրո ճեճ երգիչը

Սկիզբը՝ էջ 6

Ու թե՛ սերը տառապանք է բերում, բայց նաեւ կյանքի հիմքն է՝ սիրահար սրտին կենդանություն պարգևողը:

Ես աչք ու դու լոյս, հոգի,
առանց լո՛յս՝ աչքըն իմաւարի.
Ես ձուկ ու դու ջուր, հոգի,
առանց ջո՛ւր՝ ձուկըն մեռանի.
Երբ գճուկն ի ջըրեն հանեն
Լ՛ի այլ ջուր ձըգեն, նայ ապրի,
Երբ գիս ի քենէ զատեն,
քան զմեռնելն այլ ճար չի լինի:

Նահապետ Բուչակն իր հայրեններում նախ եւ առաջ հանդես է գալիս որպես նվիրված սիրահար, որը պատրաստ է անսահման պաշտպանել իր սիրելիին, գովերգել նրա արտաքին բարեմասնություններն ու հիանալ անսահման գեղեցկությամբ: Նրա փոքրիկ սիրերգերում բազմաթիվ համեմատություններով, մակդիրներով եւ ներկայացված գեղեցկուհին, եւ որպես համեմատության եզր՝ գործածվում են երկնային լուսատուներն իրենց պայծառությամբ, զարդեղենը՝ իր ողջ ճոխությամբ: Գրեթե բոլոր հայրենների սկզբում սիրահար երգիչն իր «խօշ եարին» դիմում է բազմաթիվ գեղեցիկ ձեւերով՝ «հողեղեն ու բարձրագնայ լուսին», «մարգարտե շարոց», «ընտանի կաքավ», «ծառ արմաւեն», «նշենի ծաղիկ», «հազրեվարդ», «կանաչ թուփ՝ կարմիր խնձորով», «ամենից պայծառ ծաղիկ» եւ այլն:



«Ա՛յ իմ նըշենի ծաղիկ, ծաղկեցար ու դարձար ի նուշ.

Բերանդ է աշուղ - մաղուշ, պըռկըներդ է արմաւ ու նուշ:

Արշակ Չոպանյան, Հայրեններու բուրաստանը, էջ 138

Հայ բանաստեղծներից շատն են չքնաղ պատկերել իրենց սիրուհիներին, սակայն ինքնատիպ են քուչակյան պատկերները: Նա առանձին-առանձին գովաբանել է «կօզալի» քայլվածքը, երբ նա ելնում է տնից, «զինչ ելնի արեն ի մտեն» կամ «նավն ի ծովեն», մեջքը, որ բարակ է, երկար եղեգնի պես է, թուխ ամպի նման՝ «զետ եկեղեցոյ կամարն ի վեր քաշած» եւ հոնքերը, լայն, սիրուն, կարմիր վարդ է երեսը, շաքարից քաղցր, բարակ, անուշ, փոքրիկ են շուրթերը, լեզուն «է պլպուլ նման, կու գովէ զիլ գարնան նման», «ծովէն առած» աչքեր, մոմի նման մատներ, «կաթով շաղուած» ծոցիկ: Ահա մի սքանչելի պատկեր:

Աչքերդ է ի ծով նըման, որ Մըսրաց ի դուռն է կանգնեք.

Վարսերդ է յալի նըման, որ քամին կ՛ան տարուբեր.

Քան զուռ ես ի վեր վագեր, քան զկարմիր խընձոր բոլորեր.

Պայծառ ես քան զքաֆուր վարդ, որ հոտով զաշխարհս է լըցեր:

Էջ 147

Ինչպես իրավացիորեն նկատել է Մանուկ Աբեղյանը, սիրած կնոջ անձը, արտաքին բարեմասնությունները նկարագրելն ու գովերգելը գրեթե բոլոր սիրերգակների կողմից ընդունված մի եղանակ է եղել եւ կա, ինչը կիրառվել է նաեւ օտար ազգերի բանաստեղծության մեջ:

Շարունակելի

Վարդան ԵՂԻՎԱՆՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

Սկզբը՝ էջ 5

Այս մատենագիտության առանձնահատուկ կողմերից մեկը նրա ընդգրկունությունն է. այն ներառում է Նարեկացու անձին ու գործին առնչվող յուրաքանչյուր գրվածք՝ տպագիր թե՛ ձեռագիր, որ հասանելի է եղել հեղինակին: Ու քանի որ նշված աշխատության մեջ արտացոլված է Նարեկացու ամբողջ ստեղծագործական ժառանգությունը, ուստի այնտեղ իրենց հետաքրքրող տեղեկություններ կարող են գտնել ոչ միայն նարեկացիագետները, այլ նաև առհասարակ հայագետները, գրականագետները, աստվածաբանները, փիլիսոփաները, արվեստագետները, մշակութաբանները, մանկավարժները, հոգեբույժները եւ պարզապես լայն շրջանակի ընթերցողները. մեծ է աշխատության ճանաչողական արժեքը:

Մատենագիտությունը կազմելու համար աղբյուր են ծառայել Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակները, հմայիլները եւ գրքային ֆոնդերը, Հայաստանի ազգային գրադարանի, ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի ֆոնդերը, ԱՎ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի, Երեւանի պետական համալսարանի, Ե. Զարեկի անվան գրականության եւ արվեստի թանգարանի, Հայաստանի պատմության թանգարանի, Վ. Բյուրուկի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, ՀՀ գրողների միության, Գրապալա-

Թանկագին ընծա նարեկացիագետների և ոչ միայն



տի գրքային ֆոնդերում եղած՝ Նարեկացու ստեղծագործությունների եւ նրա անվան հետ կապված տարաբնույթ տեղեկությունները:

Ձեռագրերի ճիշտ նկարագրության համար հեղինակը շնորհակալություն է հայտնում Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Հակոբ Զյոսեյանին, ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, ձեռագրագետ Լուսինե Թումանյանին եւ Հայաստանի ազգային

գրադարանի աշխատակցուհի, կենսաբանական գիտությունների թեկնածու Նոնա Ստեփանյանին, շնորհակալություն է հայտնում նաև գրադարանների եւ Մատենադարանի բանիմաց ու բարյացակամ վերաբերմունք ցուցաբերած աշխատակիցներին:

Սույն գիրքը հրատարակվել է Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխնորդ Նավասարդ արք. Կոնյանի հոգածությամբ եւ Երեւանաբանակ բարերար Կարո Շախբազյանի մեկենասությամբ, որոնց էլ հեղինակը հայտնում է իր խորին շնորհակա-

լությունը:

Այս մեծարժեք աշխատանքը պատրաստ էր տպագրության, երբ 2015 թ. մայիսի 12-ին Վատիկանի Ս. Պետրոսի տաճարում Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ Նորին Սրբություն Ռոմի Ֆրանցիսկո Պապի կողմից մատուցված Սբ Պատարագից հետո սուրբ Գրիգոր Նարեկացիի հոգակվեց Տիեզերական Եկեղեցու 36-րդ վարդապետ (հիշյալ իրադարձության հետ կապված նյութերը գետեղված են «Յավելուած» բաժնում): Հեղինակն այս մատենագիտությունը նվիրել է Պապի կողմից ս. Գրիգոր Նարեկացուն Տիեզերական Եկեղեցու վարդապետ հռչակելուն եւ Հայոց մեծ եղեռնի 100-ամյակին:

Խնդրո առարկա մատենագիտությունը մեզանում Նարեկացու թողած անգին ու անմահ վաստակը հայագիտական ուսումնասիրությունների հիման վրա հաշվառելու եւ որոշակի համակարգով ներկայացնելու առաջին փորձն է: Ավելի քան մեկ տասնամյակ Աստղիկ Ղափլանյանը անձանձիր աշխատել է Հայաստանի տարբեր գրամշակութային օջախներում. որոնել, դասակարգել, ամբողջացրել... Այդ աշխատանքի շարժառիթն այն անվերապահ ու ակնածո սերն է, որ տիկին Աստղիկը տածում է Նարեկացու անվան ու

ժառանգության նկատմամբ: «Տասնդարյա պատմություն... եւ երկար տարիների աշխատանք, որը փորձում է ի մի բերել Նարեկացիագիտության անցած ուղին: Ս. Գրիգոր Նարեկացու գրական ժառանգությանը ծանոթանալու համար հարկավոր էր ոչ միայն նյութերի ուսումնասիրություն, այլև երկարատև կենտրոնացում, սերմն մտածողի եւ աստվածաբանի նկատմամբ, ի վերջո՝ անսահման հավատ առ Աստված», - գրում է գրքի խմբագիր Հակոբ Զյոսեյանը: Իրոք, այս աշխատությունը յուրուկի ներկայացնում է Նարեկացիագիտության անցած ողջ ուղին:

Նշենք, որ հեղինակը սոսկ չի գետեղել մատենագիտական միավորների վերնագրերը ժողովածուի մեջ, նա ձեռքն է առել դրանցից յուրաքանչյուրը, թերթել, զգացել դրանց լույսն ու ջերմությունը: Իր կատարած աշխատանքը տիկին Աստղիկը բնորոշում է Հակոբ Նալյան պատրիարքի հետեւյալ խոստում արտահայտությամբ. «Ազամանդե պալատին խեցի է դուռ շինեցի»:

Հեղինակն աշխատում է մատենագիտության նոր՝ վերամշակված տարբերակի ուղղությամբ, որը ներառելու է 2468 մատենագիտական միավոր:

Հրայր ԲԱԼՈՅԱՆ (Արմենյան)
Բանասիրական գիտ. թեկնածու

Պատմության և ժողովրդագրության

Սկզբը՝ էջ 7

ԱՍՏՎԱԾ ՑՈՒՅՑ ԿՏԱ ԵԼԵԸ

Ամեն բան լավագույնս կկարգավորի բարի Աստված, բայց շատ համբերություն եւ ուշադրություն է անհրաժեշտ, քանի որ հաճախ շտապելով քանդելու կծիկը՝ մարդիկ ավելի շատ են այն խառնում: Աստված համբերությամբ է քննում: Այն, ինչ հիմա է տեղի ունենում, երկար չի տևի: Աստված ավելի ձեռքը կվերցնի: 1830 թ. Աթոսում թուրք շատ զինվորներ կային, դրա համար որոշ ժամանակ Իվիրոն վանքում վանականներ չէին մնացել: Հայրերը հեռացել էին. ոմանք՝ սուրբ մասունքներով, ոմանք էլ՝ օգնելու հեղափոխությանը: Միայն մեկ վանական էր հեռվից գալիս՝ մաքրություն անելու եւ կանթեղները վառելու համար: Վանքի եւ ներսում, եւ շրջակայքում զինված շատ թուրքեր կային, եւ այս խեղճն ավելիով ասում էր. «Ո՛վ Տիրամայր, տեսնես՝ ի՞նչ է լինելու»: Մի անգամ նա Տիրամորը դառնագին աղոթելիս տեսնում է իրեն մոտեցող փայլող եւ լուսարձակող դեմքով մի Կնոջ: Դա Աստվածամայրն էր: Նա վերցնում է ավելի

Հոգեվոր Արթուրի ԹՅՈՒՆ

ու ասում. «Դու լավ չես ավում, ես ինքս կմաքրեմ»: Եվ սկսում է ավելի, հետո անհետանում դեպի խորանի ներսը: Երեք օրից թուրքերը հեռացան: Տիրամայրը նրանց վռնեց: Այն, ինչ ճիշտ չէ, Աստված մի կողմ կնետի, ինչպես աչքն է արցունքի միջոցով դուրս նետում աղբը: Սատանան աշխատում է, բայց Աստված նույնպես աշխատում է եւ չարը վերափոխում օգտակարի այնպես, որ դրանից բարիք ստացվի: Օրինակ՝ եթե կոտորվում է սալիկը, Աստված դրա կտորներից պատրաստում է գեղեցիկ խճանկար: Դրա համար դույզն-ինչ մի՛ տխրեք, քանզի ամեն ինչից եւ բոլորից վեր Աստված է, Ով իշխում է ամեն ինչի վրա եւ յուրաքանչյուրին կնստեցնի մեղադրյալի աթոռին՝ պատասխան տալու գործած մեղքի համար, եւ համապատասխան էլ՝ յուրաքանչյուրը Նրանից վարձ կստանա: Կպարգեւատրվեն նրանք, ովքեր ինչ-որ բանով կօգնեն բարուն, եւ կպատժվի նա, ով չարիք է գործում: Ի վերջո Աստված ամեն ինչ իր տեղը կդնի, բայց մեզանից յուրաքանչյուրը պատասխան կտա այն բանի համար, ինչ արել

է այս դժվար տարիներին իր աղոթքով եւ բարությամբ:

Այսօր փորձում են կործանել հավատը, եւ որպեսզի հավատի շենքը փլվի, կամաց-կամաց հանում են բարը քարի հետեւից: Եվ մենք՝ բոլորս, այդ փլուզման համար պատասխանատու ենք. ոչ միայն նրանք, որ հանում են քարերը եւ քանդում, այլև՝ մենք, որ տեսնելով, թե ինչպես է փլուզվում հավատքը, ջանք չենք գործադրում՝ այն ամրացնելու համար: Մերձավորին դեպի չար մղողը պատասխան է տալու Աստծո առաջ: Բայց պատասխան կտա նաեւ նա, ով այդ ժամանակ մոտ էր կանգնած. չէ՞ որ նա տեսնում էր, թե ինչպես է ինչ-որ մեկն իր մերձավորին դրոշմ դեպի չարիք, եւ չէր հակադրվում դրան: Ժողովուրդը հեշտությամբ է հավատում մեկին, ով համոզելու կարողություն ունի:

- Մարդիկ, հայր, նման են գազաններին...

- Ես գազաններից չեմ գանգատվում: Գիտե՞ս ինչ, կենդանիները չեն կարող մեծ չարիք գործել, որովհետեւ նրանք բանականություն չունեն, միջնդեռ Աստծուց հեռացած մարդն ամենա-

հուժկու գազանից ավելի վատն է: Մեծ չարիք է գործում: Թունդ քացախը պատրաստվում է թթված գինուց: Մնացած արհեստական քացախներն այդքան թունդ չեն... Ավելի սարսափելի է, երբ սատանան համագործակցում է այլասերված մարդու հետ, այդ դեպքում նա ուրիշներին կրկնակի չարիք է պատճառում, այդպես էլ մարմնական միտքը, երբ համագործակցում է մարմնականի հետ, մարմինն մեծ վնաս է հասցնում: Եվ որպեսզի սատանան համագործակցի նման մարդու հետ, նա պետք է հույսը դնի նրա վրա, տվյալ մարդն ինքը պետք է նախընտրի չարը, ունենա այն իր մեջ:

Արդյունքում, Աստված հեռու պահի, այդ այլասերողները դիտավորյալ մեզ համար բարոյություններ կստեղծեն, կհալածեն մնացած մարդկանց, վանքերը: Նրանք կչարանան Եկեղեցու, վանականության դեմ այն բանի համար, որ վերջիններս կխոչընդոտեն նրանց ծրագրերին: Այսօրվա իրավիճակին կարելի է դիմագրավել միայն հոգեւորով եւ ոչ աշխարհիկ մտածողությամբ: Փոթորիկը մի քիչ էլ կուժեղանա, ավ

կնետի տարաներ, աղբ, անպետք իրեր, իսկ հետո իրավիճակը կպարզվի: Եվ դուք կտեսնեք, թե ինչպես այս իրավիճակում ոմանք կստանան արժանի վարձք, իսկ մյուսները կվճարեն պարտքերը: Կստացվի այնպես, որ վերապրելիք տառապանքները մարդկանց համար ուժերից վեր չեն լինի, չնայած, իհարկե, «Փառք Զեզ, Աստված» էլ չեն ասի:

Որքան է սիրում մեզ Աստված: Եթե այն, ինչ կատարվում է այսօր (այս գրույցը տեղի է ունեցել 1985-ի հունիսին), եւ այն, ինչ հիմա մտադրվում են անել, տեղի ունենար քսան տարի առաջ, երբ մարդիկ չունեին հոգեւոր տեղյակություն, ապա շատ ծանր կլինեք: Այսօր մարդիկ գիտեն՝ Եկեղեցին դարձել է ավելի ամուր: Աստված սիրում է մարդուն՝ Իր ստեղծածին, եւ կհոգա այն բանի մասին, ինչ պետք է նրան, միայն մարդ արարածն ինքը հավատքով լցվի եւ հետեւի Նրա պատվիրաններին:

Շարունակելի
Ռուսերենից թարգմանությունը՝
Արմինե ՏԵՐՏԵՐՅԱՆԻ

Տրասարակվել է Մայր Աթոռ Սբ Էջմիածնում (2017 թ.)


Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել «Արարատի» ժառանգության ուսումնասիրությանը նվիրված 10-րդ հրատարակությունը՝ «Արարատ»-ի բնագիրները՝ երկհատորյակի Ա հատորը, որը հրատարակության է պատրաստել Սուսաննա Պետրոսյանը: Գրքի դասակարգումն ու խմբագրումը կատարվել է պ. գ. դ. Գեւորգ Տեր-Վարդանյանի կողմից:

Երկհատոր այս գիրքն իր մեջ պիտիում եւ ցուցադրում է «Արարատ» հանդեսի հրատարակման ամբողջ ընթացքի՝ 1868-1919 թթ. Մայր Աթոռ Ս. Էջ-

միածնի պաշտոնական ամսագրի, միաբանության եւ նրա առանձին անդամների բնագրական հետաքրքրությունների եւ իրագործումների ընդհանուր, ամբողջական պատկերը:

Գրքի առաջին հատորում հրատարակված են պատմագրական, վավերագրական, հայ մատենագրության եւ միջնադարյան հայ գրականության տարբեր ասպարեզների վերաբերող շատ արժեքավոր 79 բնագիր:

Գիրքը հրատարակվել է մեկենասությամբ «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի:



ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկաթաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 16.10.2017 թ..

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ